ՀԱՍՏԱՏՎԱԾ է

«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ խորհրդի
«24» մայիս 2024թ.
Թիվ 02-Ո-23-006/01 որոշմամբ
Խորհրդի նախագահ՝
Է. Սուքիասյան_____

«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ ԲԵՌՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Նախագիծը	Անուն/Ազգանուն	Պաշտոն	Ամսաթիվ	Ստորագրություն
ԿԱՌՄԵՑ	Լ. Մամիկոնյան	Գործադիր տնօրենի տեղակալ	11.03.2024	
ՍՏՈՒԳԵՑԻՆ	Գ. Գյուլամբարյան	Համապատասխանության ապահովման պատասխանատու	26.04.2024	
	Հ. Ռաֆայելյան	Իրավաբանական բաժնի պետ	30.04.2024	
ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ Է ԱՐԺԱՆԱՑԵԼ	Ա. Մելքոնյան	Գործադիր տնօրեն	16.05.2024	

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3
2. ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 3
3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ 6
4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ 7
5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ՈՉ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ 9
6. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ 11
7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ 15
8. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 17
9. ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ 22
10. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՅՑԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 23
11. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ 27
12. ԱԲԱՆԴՈՆ 31
13. ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔ ԱՊԱՀՈՎԱԴՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ԱՆՑՆԵԼԸ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ) 31
14. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ 32
15. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ 35
16. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ 38
17. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ) 40
18. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ 40
ՀԱՎԵԼՎԱԾ 40

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. ««ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ Բեռների ապահովագրության պայմաններ» փաստաթուղթը նպատակ է հետապնդում տալ Պայմանների կիրառման յուրաքանչյուր ոլորտի ապահովագրական օբյեկտ, ապահովագրական պատահար, ապահովագրական հատուցում և այլ հասկացությունների սահմանումը, ինչպես նաև յուրաքանչյուր ծածկույթի պարագայում կարգավորել Ապահովագրողի կողմից հատուցվող ծախսերի, չհատուցվող ծախսերի, հատուցում ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերի և ապահովագրական պատահարի դեպքում՝ Կողմերի գործողությունները:

1.2. Պայմանները մշակված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքին, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքին (այսուհետ՝ Օրենք) և այլ իրավական ակտերին (այսուհետ միասին՝ ՀՀ օրենսդրություն) համապատասխան: Պայմանները պարունակում են նաև Լոնդոնյան Ապահովագրողների Ինստիտուտի Վերապահումների (ICC) Լրացուցիչ պայմանները (այսուհետ՝ Դրույթներ)՝ համաձայն Հավելվածի:

1.3. Ընկերությունն իրականացնում է Բեռների (փոխադրվող գույքի) ապահովագրություն Օրենքով նախատեսված ոչ կյանքի ապահովագրության 7-րդ դասով:

1.4. Սույն փաստաթուղթը համապատասխանում է ISO 9001:2015 ՈԿՀ և ISO 27001:2013 ՏԱԿՀ ստանդարտներին:

1.5. Պայմաններն ուժի մեջ է մտնում 2024թ հուլիսի 01-ից: Պայմանների ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած են համարվում «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ Խորհրդի թիվ 10 արձանագրությամբ 01.10.2009թ. հաստատված ««ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ Բեռների ապահովագրության պայմանները»:

1.6. Պայմաններում փոփոխությունները և/կամ լրացումները կատարվում են Պայմաններով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում ու հաստատվում են Ընկերության խորհրդի որոշմամբ:

1.7. Պայմանները հրապարակային օգտագործման փաստաթուղթ է և կարող է տեղադրվել Ընկերության պաշտոնական կայքում (www.silinsurance.am):

2. ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

2.1. Տերմիններ և հասկացություններ.

2.1.1. *Ընկերություն* - «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ:

2.1.2. *Պայմաններ* - «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ Բեռների ապահովագրության պայմաններ:

2.1.3. *Ապահովագրության պայմանագիր/վկայագիր (այսուհետ՝ Պայմանագիր)* - Պայմանների պահանջների հիման վրա կնքված պայմանագիր՝ Ապահովագրողի և Ապահովադրի միջև համաձայնություն, որի գործողության ընթացքում Ապահովագրողը պարտավոր է Ապահովադրին կամ Շահառուին կամ վերջինիս համար ապահովագրական գումարի շրջանակներում հատուցել ապահովագրական պատահարի տեղի ունենալու ուժով պատճառված վնասը կամ դրա մի մասը (ապահովագրական հատուցում), բացառությամբ՝ Պայմաններում նախատեսված բացառությունների և չհատուցվող ծախսերի, իսկ Ապահովադիրը պարտավոր է վճարել Պայմանագրում նշված ապահովագրավճարը՝ դրանում նշված կարգով և ժամկետներում:

2.1.4. *Գլխավոր պայմանագիր* - որոշակի ժամանակահատվածի ընթացքում և միանման պայմաններով միատարր ապահովագրության օբյեկտի տարբեր խմբաքանակների պարբերական ապահովագրություն՝ մեկ ապահովագրության պայմանագրի հիման վրա:

2.1.5. *Ապահովագրող* - «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ, որն իրականացնում է ապահովագրական գործունեություն՝ համաձայն լիազորված մարմնի կողմից տրված լիցենզիայի:

2.1.6. *Ապահովադիր* - ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ցանկացած կազմակերպաիրավական ձևի իրավաբանական անձ, գործունակ ֆիզիկական անձ, ոչ ռեզիդենտ կազմակերպություն, որն Ապահովագրողի հետ կնքել է Պայմանագիր:

2.1.7. *Կողմեր* - Ապահովագրողն ու Ապահովադիրը միասին:

2.1.8. *Շահառու* - Ապահովադրի կողմից մատնանշված և Պայմանագրում նշված ապահովագրական հատուցում ստանալու իրավունք ունեցող անձ:

2.1.9. *Շահագրգիռ անձ* - Ապահովադիրը, Շահառուն կամ նրանց ներկայացուցիչները, վերջիններիս հետ Բեռի փոխադրման հետ կապված պայմանագրային (այդ թվում՝ աշխատանքային, ծառայությունների մատուցման, բեռնափոխադրման, տրանսպորտային առաքման և այլն) հարաբերությունների մեջ գտնվող ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ:

2.1.10. *Ապահովագրության տարածք* – Պայմանագրով նախատեսված այն երկրները, որոնց տարածքով պետք է անցնի Բեռի տեղափոխման երթուղին:

2.1.11. *Ապահովագրական ռիսկ* - ապահովագրման ենթակա հնարավոր դեպք կամ իրադարձություն, որը կարող է տեղի ունենալ Պայմանագրի գործողության ընթացքում՝ կրելով հանկարծակի և պատահական բնույթ, ու կախված չէ Կողմերի կամ Շահառուի կամքից:

2.1.12. *Ապահովագրական պատահար* - Պայմանագրի գործողության ընթացքում և Ապահովագրության տարածքում Պայմանագրով նախատեսված դեպք կամ իրադարձություն, որի տեղի ունենալու ուժով Ապահովագրողը պարտավորվում

է Ապահովադրին և/կամ Շահառուին վճարել ապահովագրական հատուցում Պայմաններում և Պայմանագրում նշված կարգով՝ հաշվի առնելով դրանցում նախատեսված բացառությունները և մերժման հիմքերը:

2.1.13. *Ապահովագրական գումար* - Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագրական պատահարների դեպքում Ապահովագրողի կողմից վճարման ենթակա հնարավոր ապահովագրական հատուցման առավելագույն չափ:

2.1.14. *Ապահովագրավճար* – Պայմանագրով սահմանված չափով և պայմաններով Ապահովադրի կողմից Ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց վճարվելիք գումար:

2.1.15. *Ապահովագրական սակագին* – Ապահովագրավճարի դրույքաչափն է ապահովագրական գումարի նկատմամբ:

2.1.16. *Ապահովագրական հատուցում (այսուհետ՝ Հատուցում)* - Պայմանագրի և Պայմանների համաձայն՝ Ապահովագրական պատահար տեղի ունենալու արդյունքում վճարման ենթակա գումար (դրամական արտահայտությամբ):

2.1.17. *Պայմանական չհատուցվող գումար* - Ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային հարաբերակցությամբ կամ բացարձակ մեծությամբ Պայմանագրով սահմանված գումար, որի չափով Ապահովագրողն ազատվում է հատուցման պատասխանատվությունից, եթե վնասի չափը չի գերազանցում տվյալ գումարի չափին, հակառակ դեպքում ապահովագրական հատուցման չափը որոշելիս չհատուցվող գումարը հաշվի չի առնվում:

2.1.18. *Ոչ պայմանական չհատուցվող գումար* – Ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային հարաբերակցությամբ կամ բացարձակ մեծությամբ Պայմանագրով սահմանված գումար, որի չափով Ապահովագրողն ազատվում է հատուցում իրականացնելուց՝ անկախ վնասի կամ կորստի ընդհանուր չափից:

2.1.19. *Բեռ (փոխադրվող գույք)* - Պայմանագրում նշված՝ տարածության մեջ տեղափոխման համար նախատեսված գույք:

2.1.20. *Բեռը ստացող* - Ապահովադիր (Շահառու) կամ իրենց կողմից լիազորված անձ:

2.1.21. *Վտանգավոր բեռ* - ցանկացած նյութ, արտադրանք, արտադրական և այլ գործունեության թափոն, որն իր առանձնահատկությունների ուժով կարող է փոխադրման ընթացքում ստեղծել մարդկանց կյանքի և առողջության համար վտանգ, շրջակա միջավայրին հասցնել վնաս, բերել նյութական արժեքների վնասման կամ ոչնչացման:

2.1.22. *Չափազանց վտանգավոր բեռ* - համաձայն ԳՕՍՏ 19433 – 88 կամ միջազգային այլ նորմերով և/կամ ստանդարտներով բարձր աստիճանի վտանգավոր ֆիզիկաքիմիական հատկություններով նյութեր պարունակող բեռ, որը փոխադրման ժամանակ հատուկ նախազգուշության միջոցներ է պահանջում: Առավել վտանգավոր բեռներին են վերաբերում, մասնավորապես, պայթուցիկ նյութերը, գազերը, դյուրավառ հեղուկները և դյուրավառ պինդ նյութերը,

ինքնաբուխ այրվող նյութերը, օքսիդացնող նյութերը, օրգանական պերօքսիդ-ները, թունավոր և վարակիչ նյութերը, ռադիոակտիվ նյութերը, կաուստիկ և քայքայիչ նյութերը:

2.1.23. *Նավերի բախում* - նավերի մոտեցում, որի հետևանքով վնաս է հասցվում նա-վերին, նրանց պատկանելիքներին, բեռին, անձնակազմին և/կամ ուղևոր-ներին: Նավերի բախմանն է հավասարեցվում այն դեպքը, երբ իրականում մոտեցում տեղի չի ունեցել, սակայն մեկ նավի (ծովային) սխալ գործողու-թյունների արդյունքում հասցվել է վնաս մյուս նավին, նրանում գտնվող բեռին, գույքին, մարդկանց:

2.1.24. *Աբանդոն* - Ապահովադրի իրավունքը՝ ապահովագրված գույքի նկատմամբ իր իրավունքներից հօգուտ Ապահովագրողի հրաժարվելու՝ նպատակ հետապնդելով հատուցում ստանալ ամբողջ Ապահովագրական գումարի չափով:

2.1.25. *Բեռնափոխադրող* - ցանկացած փոխադրամիջոցով Բեռը տեղափոխող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որը մատուցում է ուղեբեռների, բեռների և փոստի փոխադրման ծառայություններ:

2.1.26. *Փոխադրամիջոց* – ցամաքային (ավտոմոբիլային), օդային, ջրային, երկա-թուղային, խողովակաշարային ցանկացած տրանսպորտային միջոց, որով տարածության մեջ իրականացվում է Բեռի փոխադրում կամ տեղափոխում:

2.1.27. Դրույթներ - Լոնդոնյան Ապահովագրողների Ինստիտուտի Վերապահումների (ICC) Լրացուցիչ պայմանները՝ համաձայն Հավելվածի:

2.2. Հապավումներ.

2.2.1. *ՀՀ* – Հայաստանի Հանրապետություն:

2.2.2. *ՈԿՀ* – ISO 9001 ստանդարտին համապատասխան Որակի կառավարման համակարգ:

2.2.3. *ՏԱԿՀ* – ISO 27001 ստանդարտին համապատասխան Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգ:

3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

3.1. Ապահովագրության օբյեկտ են համարվում՝ Ապահովադրի (Շահառուի)՝ ՀՀ օրենսդրությանը չհակասող գույքային շահերը՝ կապված Բեռի տիրապետման, օգտագործման և տնօրինման հետ:Պայմանագրով ապահովագրված և ապահովագրական պատահարի արդյունքում առաջացած լրացուցիչ ծախսերը (Պայմանների 5.3 կետ):

3.2. Ապահովագրվում են գույքի բոլոր տեսակները, որոնք ենթակա են ցամաքային, երկաթուղային, օդային, ծովային/ներքին ջրային, խողովակաշարային տրանս-պորտի տեսակներով փոխադրման և պահպանման, այդ թվում նաև բեռնման և/կամ բեռնաթափման, վերաբեռնման, փոխաբեռնման կամ տեղափոխման,

ժամանակավոր պահեստավորման, նաև ցուցադրման և/կամ օգտագործման հանրային միջոցառումներում և տարբեր տեսակի ցուցահանդեսներում:

3.3. Ապահովագրված են համարվում այն երկրների տարածքով փոխադրվող բեռները, որոնց անվանումը և երթուղին ուղղակիորեն նշված է Պայմանագրում:

4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ

4.1. Պայմանագրով հատուցվում է Բեռին հասցված այն վնասը, որն առաջացել է Բեռի փոխադրման ընթացքում Ապահովագրական պատահարի հետևանքով:

4.2. Բեռների ապահովագրությունը կարող է իրականացվել ստորև բերված հետևյալ պայմաններից (ռիսկային խմբերից) որևէ մեկի հիման վրա՝**Ռիսկային խումբ Ա՝ «Պատասխանատվություն բոլոր ռիսկերի համար»:** Պայմանագրում այս ռիսկային խումբը նախատեսված լինելու դեպքում Ապահովագրական պատահար է համարվում ամբողջ Բեռի կամ դրա մի մասի ցանկացած պատճառով տեղի ունեցած և պատահական բնույթ կրող ոչնչացումը, կորուստը կամ վնասը՝ բացառությամբ Պայմանների 4.3.1 ու 4.3.2 կետերում և Բաժիններ 14-ում ու 15-ում թվարկված դեպքերի:

4.2.2. **Ռիսկային խումբ Բ՝ «Պատասխանատվություն նշված ռիսկերի համար»**: Պայմանագրում այս ռիսկային խումբը նախատեսված լինելու դեպքում Ապահովագրական պատահար է համարվում Բեռի կամ դրա մի մասի ոչնչացումը, կորուստը կամ վնասը (բացառությամբ Պայմանների Բաժիններ 14-ում և 15-ում թվարկված դեպքերի), որը հետևանք է՝

4.2.2.1. փոխադրամիջոցի վրա հրդեհ բռնկվելու կամ պայթյուն տեղի ունենալու, ինչպես նաև բռնկված հրդեհը մարելու նպատակով իրականացվող գործողությունների,

4.2.2.2. Բեռը տեղափոխող նավի բախման, խորտակման, շրջման, ծանծաղուտի վրա նստելու կամ ափ դուրս գցվելու,

4.2.2.3. Բեռը տեղափոխող ցամաքային տրանսպորտային միջոցի ճանապարհատրանսպորտային պատահարի, վթարի, բախման, շրջման կամ ռելսերից դուրս գալու,

4.2.2.4. նավի՝ ափի հետ կամ այլ ցանկացած արտաքին օբյեկտի (բացառությամբ ջրի) հետ բախման,

4.2.2.5. նավի վթարի հետևանքով ապաստարան-նավահանգստում բեռի բեռնաթափման,

4.2.2.6. կայծակի, երկրաշարժի կամ հրաբխի,

4.2.2.7. Բեռի զոհաբերության՝ Բեռի փրկման դեպքում,

4.2.2.8. նավով փոխադրման ընթացքում Բեռի՝ ջուրն ընկնելու կամ ալիքներով Բեռը ջուրը քշելու,

4.2.2.9. նավի նավամբար, բեռնարկղ կամ Բեռի տեղադրման վայր գետի, լճի կամ ծովի ջրի կամ վառելիքի ներթափանցման,

4.2.2.10. ցանկացած բեռի միավորի (տուփ, արկղ, տարա) ամբողջական կորուստ բեռնաթափման, բեռնման և փոխադրամիջոցից դուրս ընկնելու հետևանքով:

4.2.3. **Ռիսկային խումբ Գ՝ «Պատասխանատվություն նշված ռիսկերի համար»:** Պայմանագրում այս ռիսկային խումբը նախատեսված լինելու դեպքում Ապահովագրական պատահար է համարվում Բեռի ոչնչացումը, կորուստը (բացառությամբ Պայմանների Բաժիններ 14-ում և 15-ում թվարկված դեպքերի), որը հետևանք է՝

4.2.3.1. փոխադրամիջոցի վրա հրդեհ բռնկվելու կամ պայթյուն տեղի ունենալու, ինչպես նաև բռնկված հրդեհը մարելու նպատակով իրականացվող գործողությունների,

4.2.3.2. Բեռը տեղափոխող նավի բախման, խորտակման, շրջման, ծանծաղուտի վրա նստելու կամ ափ դուրս գցվելու,

4.2.3.3. Բեռը տեղափոխող ցամաքային տրանսպորտային միջոցի ճանապարհա-տրանսպորտային պատահարի, վթարի, բախման, շրջման կամ ռելսերից դուրս գալու,

4.2.3.4. նավի՝ ափի հետ կամ այլ ցանկացած արտաքին օբյեկտի (բացառությամբ ջրի) հետ բախման,

4.2.3.5. նավի վթարի հետևանքով ապաստարան-նավահանգստում բեռի բեռնաթափման,

4.2.3.6. Բեռի զոհաբերության՝ Բեռի փրկման դեպքում:

4.3. **Ապահովագրման ենթակա լրացուցիչ ռիսկեր:** Պայմանագրում նշված լինելու և լրացուցիչ ապահովագրավճար վճարվելու դեպքում ապահովագրման ենթակա են նաև ստորև նշված ռիսկերը.

4.3.1. **«Ընդհանուր վթար»** լրացուցիչ ապահովագրության ծածկույթով հատուցվում են նավը կամ Բեռի մի մասը փրկելու համար նավի կամ Բեռի մի մասի կամավոր զոհաբերության ծախսերը՝ Բեռի նկատմամբ տոկոսային հարաբերակցությամբ:

4.3.2. **«Բախման մեջ երկուսն էլ մեղավոր են»** լրացուցիչ ապահովագրության ծածկույթը գործում է այն դեպքում, երբ նավը բախվում է մեկ այլ նավի հետ, և հնարավոր չէ պարզել բախման մեղավորությունը: Այս դեպքում երկու նավերի սեփականատերերը կիսում են բախումից առաջացած վնասները՝ իրենց գույքային շահերի և վնասված բեռի արժեքի համամասնությամբ: Նշված կետի համաձայն փոխադրողների կողմից Ապահովադրին որևէ պահանջ ներկայացվելու դեպքում Ապահովադիրը համաձայնում է այդ մասին տեղեկացնել Ապահովագրողին, և վերջինս ձեռք է բերում իրավունք

իր հաշվին պաշտպանել Ապահովադրին այդպիսի հայցից, բացառությամբ Պայմանների Բաժիններ 14-ում և 15-ում նշված դեպքերի:

4.3.3. Հավելվածի համապատասխան Դրույթով նախատեսված ռիսկեր:

4.4. Լրացուցիչ ռիսկերը ենթակա չեն առանձին ապահովագրության, այլ ապահովագրվում են միայն Բեռի փոխադրման հիմնական ռիսկերի ապահովագրության հետ միասին: Լրացուցիչ ռիսկերը կարող են կիրառվել յուրաքանչյուր ռիսկային խմբի համար առանձին:

5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ՈՉ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ

5.1. Բեռի ապահովագրական գումարը հաշվարկելիս Ապահովագրողը կարող է հիմնվել Պայմանագիրը կնքելու պահին Բեռի փաստացի գտնվելու վայրում այն գնելու համար կատարված փաստացի ծախսերի (հաշիվ, պայմանագիր և այլն) կամ իրավասու անձանց և/կամ կազմակերպությունների կողմից տրված գնահատման հաշվետվությունների, եզրակացությունների վրա կամ գնահատել այն ինքնուրույն:

5.2. Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, Բեռի ապահովագրական գումարը պետք է համապատասխանի Բեռի ձեռքբերման ինվոյսային արժեքին:

5.3. Պայմանագրով Ապահովադրի հետ համաձայնության ձեռքբերման դեպքում, լրացուցիչ ապահովագրավճարի դիմաց կարող են ապահովագրվել հետևյալ լրացուցիչ ծախսերը՝

5.3.1. Բեռի ապահովագրական գումարը կարող է սահմանվել Բեռի ապահովագրական արժեքի 110 տոկոսի չափով, որի մեջ ապահովագրական արժեքի չափը գերազանցող 10 տոկոսի սահմաններում կարող են ներառվել ՝

5.3.1.1. Մաքսային ձևակերպումների ծառայությունների ծախսեր, մասնավորապես՝

5.3.1.1.1. Մաքսային հայտարարագրում՝ ներմուծման, արտահանման և տարանցիկ հայտարարագրերի կազմում:

5.3.1.1.2. Ապրանքների արտահանման և ներմուծման համար անհրաժեշտ փաստաթղթերի կազմում:

5.3.1.1.3. Փաթեթների կազմում՝ արտահանման և ներմուծման փաստաթղթերի փաթեթների զննում, խորհրդատվություն:

5.3.1.1.4. Ինքնարժեքի հաշվարկ՝ ապրանքների ինքնարժեքի նախնական հաշվարկ, մաքսային պարտավորությունների նախնական գնահատում:

5.3.1.1.5. Բեռի զննում:

5.3.1.2. Փաստաթղթերով հաստատված Բեռի ժամանակավոր պահեստավորման, պահպանման և/կամ անվտանգության, բեռնման, բեռնաթափման, վերաբարձման, կոմիսիոն և միջնորդային ծախսերը:

5.3.2. Առանձին Ապահովագրական գումար կարող է սահմանվել նաև տրանսպորտային ծախսերի համար, մասնավորապես՝

5.3.2.1. Փաստաթղթերով հաստատված Բեռի փոխադրման ծախսերը, նավափոխադրավճարը, այլ անհրաժեշտ և հիմնավորված տրասպորտային ծախսեր (հաշիվ-ապրանքագիր, ֆրախտ-ռելիզ, չարտեր և այլն):

5.3.2.2. Վնասված բեռը նորոգման և/կամ վերականգման վայր հասցնելու և նորոգումից/վերականգնումից հետ վերադարձնելու տրանսպորտային ծախսերը, ինչպես նաև նորոգման և/կամ վերականգման համար մասնագետների գործուղման ծախսերը՝ նշանակման կետում դետալների նորոգման համար սպասարկման կենտրոնի և/կամ մասնագետի բացակայության դեպքում:

5.4. Պայմանների 5.3.1 կետում նշված ծախսերը ներառվում են ապահովագրական գումարի մեջ փաստացի կատարվելիք ծախսերի չափով, որոնք կհաստատվեն համապատասխան փաստաթղթերով: Այդ ծախսերի մեջ չեն կարող ներառվել մաքսային վճարները, հարկերը, տուրքերը և այլ պարտադիր ֆինանսական պարտավորությունները, տույժերն ու տուգանքները:

5.5. Եթե Պայմանագրով այլ բան սահմանված չէ, ապա յուրաքանչյուր ապահովագրական հատուցում վճարելուց հետո ապահովագրական գումարը նվազեցվում է կատարված հատուցման գումարի չափով: Ապահովադիրն իրավասու է լրացուցիչ ապահովագրավճար վճարելու միջոցով վերականգնել ապահովագրական գումարի սկզբնական չափը, որի դեպքում գործող Պայմանագրին կից թողարկվում է հավելված:

5.6. Եթե Բեռի իրական (շուկայական) արժեքը ավելի մեծ է, քան Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը, ապա Բեռին հասցված վնասը հատուցվում է ապահովագրական գումարի և Բեռի իրական (շուկայական) արժեքի հարաբերությանը համամասնորեն՝ համաձայն Պայմանագրի և Պայմանների:

5.7. Պայմանագրով կարող է նախատեսվել պայմանական կամ ոչ պայմանական չհատուցվող գումար՝ դրամական արտահայտությամբ կամ ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ:

5.8. Հատուցման չափը հաշվարկելիս չհատուցվող գումարը կիրառվում է յուրաքանչյուր ապահովագրական պատահարի համար, սակայն եթե վնասները պատճառվել են միմյանցից բխող փոխկապակցված իրադարձությունների արդյունքում, ապա չհատուցվող գումարը կիրառվում է միայն մեկ անգամ:

5.9. Ապահովագրավճարի չափը սահմանվում է Պայմանագրով՝ ֆիքսված գումարի չափով կամ Ապահովագրական գումարի նկատմամբ կիրառելով համապատաս-

խան ապահովագրական սակագին, որի չափը հաշվարկվում է Ապահովագրողի կողմից:

5.10. Ապահովագրողը կարող է ապահովագրական սակագների նկատմամբ կիրառել կարգավորիչ գործակիցներ (ավելացնել/նվազեցնել)՝ կախված Ապահովադրի կողմից ընտրված ռիսկից, Բեռի բնութագրերից, Բեռի փոխադրման առանձնահատկություններից, Պայմանագրի գործողության ժամկետից և այլ հանգամանքներից, որոնք կարող են ազդել ռիսկի աստիճանի վրա:

5.11. Ապահովագրավճարը Կողմերի համաձայնությամբ կարող է վճարվել միանվագ կամ տարաժամկետ կարգով, որի վճարման չափը, կարգն ու ժամկետները սահմանվում են Պայմանագրով:

5.12. Եթե Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 5 օրվա ընթացքում Ապահովադիրը չի վճարում միանվագ կամ առաջին հերթական ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը սույն կետով սահմանված ժամկետին հաջորդող 3-րդ օրվանից սկսած (եթե Պայմանագրով այլ ժամկետ սահմանված չէ):

5.13. Եթե Պայմանագրով նախատեսվել է ապահովագրավճարի տարաժամկետ վճարման պարտավորություն, և Ապահովադիրը սահմանված ժամկետներում չի վճարել հերթական ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի Ապահովագրավճարի վճարման համար սահմանված ժամկետից 3 (երեք) օր հետո միակողմանի լուծել Պայմանագիրը:

5.14. Եթե Պայմանագրով նախատեսվել է ապահովագրավճարի տարաժամկետ վճարման պարտավորություն, ապա Ապահովագրողը հատուցում տրամադրելիս հատուցվող գումարը կարող է նվազեցնել չվճարված ամբողջ ապահովագրավճարի չափով՝ անկախ Պայմանագրով սահմանված Ապահովագրավճարի վճարման ժամկետներից:

6. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

6.1. Պայմանագիրը կարող է կնքվել ինչպես Բեռի կոնկրետ մեկանգամյա փոխադրման համար, այնպես որոշակի ժամանակահատվածի ընթացքում և միանման պայմաններով միատարր կամ տարբեր բեռի խմբաքանակների պարբերական ապահովագրությամբ՝ Գլխավոր ապահովագրության պայմանագրի հիման վրա:

6.2. Պայմանագրի կնքման համար հիմք է հանդիսանում Ապահովագրողի կողմից տրամադրված և Ապահովադրի կողմից լրացված դիմում-հարցաթերթիկը կամ էլեկտրոնային որևիցէ եղանակով ապահովագրության ենթակա բեռի վերաբերյալ Ապահովադրի կողմից տրամադրված հետևյալ տեղեկությունը.

6.2.1. Բեռի հստակ անվանումը, բնութագիրը, փաթեթավորման տեսակը, տեղերի քանակը և բեռի քաշը:

6.2.2. Փոխադրումը իրականացնող տրանսպորտային միջոց(ներ)ի տեսակը:
6.2.3. Բեռն ուղարկելու և փոխադրելու եղանակը, փաթեթավորումը (բեռնարկղերում, ցրվածքով, կույտերով, լիցքով, նավամբարում կամ տախտակամածում և այլն):
6.2.4. Բեռի ուղարկման, վերաբարձման, պահպանման և հանձնման կետերը:
6.2.5. Փոխադրումների քանակը և բեռնափոխադրման ժամկետները:
6.2.6. Պահեստի բնութագիրը և պատկանելիությունը, պահպանման եղանակը, պահեստում պահպանման սկզբի և ավարտի ամսաթվերը:
6.2.7. Բեռի իրական արժեքը և պահանջվող ապահովագրական գումարը:
6.2.8. Բեռի պահպանությունն ապահովելու պայմանները, պահակախմբի (ուղեկցողների) առկայությունը:
6.2.9. Պահանջվող ապահովագրական ռիսկերի ցանկը:

6.3. Պայմանագրի կնքման ժամանակ Ապահովագրողը կարող է պահանջել ռիսկի աստիճանը բնութագրող լրացուցիչ փաստաթղթեր և/կամ տեղեկություններ:

6.4. Պայմանագիրը կնքվում է գրավոր ձևով Կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով կամ փոստային եղանակով ստորագրված փաստաթուղթ փոխանակելու միջոցով կամ էլեկտրոնային եղանակով՝ Պայմանագրում նշված Կողմերի էլեկտրոնային փոստերի կամ կապի այլ միջոցներով էլեկտրոնային հաղորդագրություն, փաստաթուղթ կամ տվյալ փոխանակելու միջոցով, այդ թվում՝ էլեկտրոնային հարթակով (ինտերնետային կայքով, էլեկտրոնային հավելվածով կամ համանման այլ միջոցներով), որոնք ունեն նույն իրավական նշանակությունը, ինչ ձեռագիր ստորագրված պայմանագիրը:

6.5. Պայմանագրի անբաժանելի մասն են կազմում Պայմանները: Պայմանագրին կից կարող են թողարկվել վկայագրեր, հավելվածներ, որոնք նույնպես հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը:

6.6. Բեռի հատկություններից, փոխադրման տեսակից, երթուղուց և այլ հատուկ ու բնորոշ պայմաններից և իրավիճակներից կախված՝ Կողմերը կարող են համաձայնել լրացնել Պայմանագրի պայմանները Հավելվածում նշված Դրույթ(ներ)ով: Պայմանագրում կատարվում են համապատասխան լրացումներ՝ պարտադիր հղում կատարելով Հավելվածի համապատասխան Դրույթ(ներ)ին:

6.7. Պայմանագրի կորստի, վնասվածքի կամ ոչնչացման դեպքում Ապահովագրողը Ապահովադրի կամ Ապահովագրված անձի դիմումի հիման վրա 3 աշխատանքային օրվա ընթացքում վերջին(ներ)իս տրամադրում է Պայմանագրի կրկնօրինակը:

6.8. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Պայմանագրով սահմանված ժամկետներում, սակայն ոչ ուշ, քան Բեռը Բեռնափոխադրողին պահեստում, նավահանգստում, երկաթուղային կայարանում, մեկնման օդանավակայանում (այսուհետ՝ մեկնման

կետ) հանձնելու պահից և տևում է ողջ փոխադրման, այդ թվում՝ վերաբարձման ընթացքում, ինչպես նաև միջանկյալ պահեստավորման կետերում, և ավարտվում է Բեռնափոխադրողի կողմից ստացողին պահեստում, նավահանգստում, երկաթուղային կայարանում, նշանակման օդանավակայանում (այսուհետ՝ նպատակակետ) հանձնման պահին:

6.9. Մեկանգամյա Պայմանագիրը կարող է կնքվել Կողմերի համաձայնությամբ ցանկացած ժամկետով, սակայն ոչ ավել, քան 90 օր ժամկետով, եթե Պայմանագրով այլ ժամկետ նախատեսված չէ:

6.10. Գլխավոր պայմանագիրը կարող է կնքվել Կողմերի համաձայնությամբ՝ մինչև 1 տարի ժամկետով:

6.11. Գլխավոր պայմանագրով ապահովագրության դեպքում Ապահովագրողը պատասխանատվություն է կրում հատուցել այն բոլոր ապահովագրական պատահարներից առաջացած վնասների համար, որոնք տեղի են ունեցել Բեռների հետ, որոնց ապահովագրության ժամկետը սկսվել է Պայմանագրի գործողության ընթացքում և որոնք հայտարարագրվել են Ապահովագրողին Գլխավոր պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

6.12. Գլխավոր պայմանագրով փոխադրվող բեռների ապահովագրության դեպքում Ապահովագրողը թողարկում է Պայմանագիր Բեռի խմբաքանակի յուրաքանչյուր փոխադրման համար կամ Կողմերի կողմից հաշվետու ժամանակահատվածում ստորագրվում է բորդերո, որոնց դրույթները նախապատվություն ունեն Գլխավոր պայմանագրի նկատմամբ, եթե Գլխավոր պայմանագրի պայմաններով այլ բան նախատեսված չէ:

6.13. Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա Ապահովագրողի պարտավորությունները ուժի մեջ են մտնում Բեռը՝ Պայմանագրում նշված մեկնման կետում փոխադրման ընդունելու պահից և գործում են ամբողջ փոխադրման, այդ թվում նաև վերաբարձման և տեղափոխման ընթացքում, վերաբարձման և տեղափոխման կետերի պահեստներում պահպանման՝ համաձայնեցված ժամկետի ընթացքում, եթե դրանք նախատեսված են Պայմանագրով:

6.14. Ապահովադիրը պարտավոր է անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում Պայմանագրում նշված կապի միջոցներով Ապահովագրողին տեղեկացնել Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո՝ Պայմանագրի, Պայմանների համաձայն Ապահովագրողին հայտնած տեղեկություններում տեղի ունեցած էական փոփոխությունների մասին, որոնք կարող են հանգեցնել ռիսկի աստիճանի ավելացման (անմիջական ազդեցություն ունենալ պատահարի տեղի ունենալու հավանականության, հնարավոր վնասի չափի վրա): Էական են համարվում Բեռի փոխադրման երթուղու, ուղարկման ժամկետների (3 օրից ավելի շեղում), Բեռը Պայմանագրով չնախատեսված երկարաժամկետ (3 ամիս և ավել) ձմեռելու թողնելու, փաթեթավորման, տեղափոխող տրանսպորտային

միջոցի, Բեռի արժեքի, միջանկյալ նավահանգիստների, պահեստների, ժամանակավոր պահպանման վայրերի, Բեռի առաքման և/կամ ստացման վերջնակետերի և ժամկետների փոփոխությունները:

6.15. Պայմանների 6.14 կետում նկարագրված էական փոփոխությունների մասին ծանուցվելուց հետո Ապահովագրողն իրավունք ունի՝

6.15.1. փոփոխել Պայմանագրի պայմանները, ժամկետները և/կամ ավելացնել ապահովագրավճարի չափը:

6.15.2. դադարեցնել Պայմանագիրը, եթե Ապահովադիրը (Շահառուն) չի համաձայնում Պայմանագրի պայմանների փոփոխմանը և/կամ ապահովագրավճարի լրացուցիչ գումարի ավելացմանը:

6.16. Եթե ապահովագրական պատահարը տեղի է ունեցել Պայմանների 6.14 կետով նկարագրված էական փոփոխությունների տեղի ունենալուց հետո, սակայն մինչև Պայմանների 6.15.1 կետով նկարագրված Պայմանագրի նոր պայմանների վերջնական համաձայնեցումը, ապա ապահովագրության ծածկույթը կգործի միայն Ապահովագրողի համաձայնությամբ և որոշմամբ՝ պայմանով, որ նշված ծածկույթը Ապահովադրին հասանելի կլիներ Ապահովագրողի սահմանած ապահովագրավճարի և պայմանների պարագայում:

6.17. Եթե Ապահովադիրը Պայմանների 6.14 կետով սահմանված ժամկետներում Ապահովագրողին չի տեղեկացնում 6.14 կետով նկարագրված էական փոփոխությունների մասին, ապա Ապահովագրողը իրավունք ունի դադարեցնել Պայմանագիրը՝ կիրառելով Պայմանների 7.1.10 կետով նախատեսված հետևանքները:

6.18. Եթե Բեռը ապահովագրվում է ոչ թե երթուղու ամբողջ ընթացքի համար, այլ ընթացքի մի մասի՝ սկսած որևիցէ միջանկյալ կետից (նավահանգիստ, պահեստ, վայր և այլն), ապա Ապահովագրողի համաձայնությամբ այն կարող է ապահովագրվել միայն նշված միջանկյալ կետից սկսած Բեռի զննության հաշվետվությունը կամ եզրակացությունը Ապահովագրողին ներկայացվելուց հետո, որտեղ ամրագրվում է Պայմանագրի կնքման պահին Բեռի տվյալները (Բեռի հստակ անվանումը, բնութագիրը, փաթեթավորման տեսակը, քանակը և քաշը, պահպանման և ամրակապման պայմանները, Բեռի ֆիզիկական վիճակը և այլն):

6.19. Բեռների պահեստավորման ժամկետը չի կարող գերազանցել 60 օրը: Ծովային և/կամ ցամաքային բեռնափոխադրումների դեպքում 60 օրը գերազանցող պահեստավորման կամ օդային բեռնափոխադրումների դեպքում 30 օրը գերազանցող պահեստավորման դեպքում Պայմանագիրը կարող է գործել միայն լրացուցիչ ապահովագրավճարի դիմաց՝ Ապահովագրողի համաձայնությամբ, կամ պահառության ռիսկերը պետք է ապահովագրվեն նաև գույքի ապահովագրության դասով որպես գույք:

6.20. Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա Պայմանագիրը գործում է ամբողջ աշխարհում, բացառությամբ՝

6.20.1. Պատերազմական, ռազմական գործողությունների կամ ռազմական դրության մեջ գտնվող երկրների (այդ թվում՝ պատերազմական ռիսկի համատեղ կոմիտեի (Joint War Risk Committee) ցանկում ներառված տարածաշրջանների) տարածքում՝ անկախ այն հանգամանքից պատերազմը (ռազմական դրությունը) հայտարարված է, թե ոչ:

6.20.2. Այն երկրների տարածքում, որոնց նկատմամբ կիրառվում են ԵՄ-ի, ԱՄՆ-ի, ՄԹ-ի, ՄԱԿ-ի և/ կամ այլ միջազգային կառույցների տնտեսական և/կամ ռազմական սանկցիաներ:

6.20.3. Այն տարածքներում, որոնց սահմաններում նախքան Պայմանագրի ուժի մեջ մտնելը կամ ուժի մեջ մտնելուց հետո հայտնաբերվել և արձանագրվել/ճանաչվել են համաճարակների օջախներ:

6.21. Ապահովագրության ժամկետի ավարտը չի ազատում Ապահովագրողին ապահովագրության ժամկետի ընթացքում տեղի ունեցած ապահովագրական պատահարներով հատուցում վճարելու պարտականությունից:

6.22. Հօգուտ Շահառուի Պայմանագրի կնքումը չի ազատում Ապահովադրին Պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարելուց, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ կամ եթե Ապահովադրի պարտավորությունները չեն կատարվում Շահառուի կողմից:

7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ

7.1. Պայմանագիրը դադարում է.

7.1.1. եթե ավարտվել է Պայմանագրի գործողության ժամկետը,

7.1.2. եթե Բեռը ստացողը ստացել է Բեռը,

7.1.3. եթե Բեռն ամբողջությամբ վնասվել կամ կորել է ապահովագրական պատահարից տարբերվող այլ պատճառներով,

7.1.4. եթե ՀՀ օրենսդրության համաձայն՝ Բեռի նկատմամբ սեփականության իրավունքները փոխանցվել են այլ անձի, բացառությամբ եթե սեփականատիրոջ փոփոխության մասով նախապես փոփոխություն է իրականացվել Պայմանագրում,

7.1.5. եթե լուծարվել է կամ սնանկ է ճանաչվել իրավաբանական անձ հանդիսացող Ապահովադիրը կամ մահացել է ֆիզիկական անձ Ապահովադիրը, բացառությամբ այն դեպքերի, երբ Շահառուն այլ անձ է,

7.1.6. եթե Ապահովագրողը կատարել է Ապահովադրի կամ Շահառուի հանդեպ իր պարտականությունները ամբողջ ծավալով,

7.1.7. եթե Ապահովագրական պատահար առաջանալու հավանականությունը վերացել է և/կամ Ապահովագրական ռիսկի գոյությունը դադարել է՝ Ապահովագրական պատահարից տարբերվող հանգամանքներով,

7.1.8. եթե առկա է Ապահովագրողի և Ապահովադրի փոխադարձ համաձայնությունը,

7.1.9. Ապահովադրի կամ Ապահովագրողի նախաձեռնությամբ՝ նախքան Բեռի փոխադրումը սկսելը,

7.1.10. Ապահովադրի կամ Ապահովագրողի նախաձեռնությամբ, եթե մյուս Կողմը թույլ է տվել Պայմանագրի և Պայմանների էական խախտում՝ խախտումը թույլ տալու պահից: Սույն հիմքով Պայմանագիրը կարող է դադարեցվել, եթե խախտումը հայտնաբերվել է եռամսյա ժամկետում: Ընդ որում Ապահովադրի նման նախաձեռնությունը Ապահովագրողին չի ազատում ճանապարհին գտնվող Բեռի համար պատասխանատվությունից՝ մինչև Պայմանագիրը դադարեցնելու պահը:

7.1.11. Պայմանների 6.15.2 կետով նախատեսված փոփոխություններին՝ Ապահովադրի անհամաձայնության դեպքում:

7.1.12. Պայմանագրով, Պայմաններով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

7.2. Պայմանների 7.1.1 - 7.1.3, 7.1.5 - 7.1.7 և 7.1.11 կետերով նախատեսված հիմքերով Պայմանագիրը դադարելու դեպքում Ապահովադրին ապահովագրավճար չի վերադարձվում:

7.3. Պայմանների 7.1.4, 7.1.8 և 7.1.9 (Ապահովադրի նախաձեռնության դեպքում) կետերով նախատեսված հիմքերով Պայմանագիրը դադարելու դեպքում Ապահովադրին վերադարձվում է ապահովագրավճարը՝ համաձայն ստորև նշված բանաձևի՝

$$ԱՎ = 0,8*ԱՊ,$$

որտեղ՝

Ավ - Ապահովադրին վերադարձման ենթակա ապահովագրավճար,

Ապ - Պայմանագրով սահմանված ապահովագրավճար,

7.4. Պայմանագիրը Ապահովադրի նախաձեռնությամբ վաղաժամկետ լուծվելու դեպքում, եթե այն պայմանավորված է Ապահովագրողի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու և/կամ խախտելու հանգամանքով, ապա չկատարման և/կամ խախտման փաստն Ապահովադրի կողմից ապացուցվելու դեպքում Ապահովագրողն Ապահովադրին է վերադարձնում ստացված ապահովագրավճարը:

7.5. Պայմանագիրը Ապահովագրողի նախաձեռնությամբ վաղաժամկետ լուծվելու դեպքում, եթե այն պայմանավորված է Ապահովադրի կողմից Պայմանագրով

ստանձնած պարտավորությունները չկատարելու և/կամ խախտելու հանգամանքով, Ապահովադրին ապահովագրավճարը չի վերադարձվում:

7.6. Պայմանների 7.1.12 կետով նախատեսված դեպքերով Պայմանագիրը դադարելիս Ապահովագրավճարի վերադարձի չափը որոշվում է Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

8. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8.1. Ապահովադիրն իրավունք ունի՝

8.1.1. Ապահովագրողի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական միջնորդի միջոցով:

8.1.2. Ապահովագրողից պահանջել ապահովագրական գործունեությունը հավաստող փաստաթղթեր (գործունեության լիցենզիա և այլն):

8.1.3. Պայմանագրով և Պայմաններով սահմանված կարգով ստանալ ապահովագրական հատուցում:

8.1.4. Վաղաժամկետ լուծել Պայմանագիրը՝ Պայմաններով սահմանված կարգով:

8.1.5. Պայմանագիրը կնքելիս նշանակել ապահովագրական հատուցման ստացողին՝ Շահառուին, ընդ որում Ապահովադրին վերապահվում է Շահառուին այլ անձով փոխարինելու իրավունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.1.6. Պայմանագրի կորստի, ոչնչացման դեպքում ստանալ վերջինիս կրկնօրինակը կամ Ապահովագրողի կողմից հաստատված պատճենը՝ «Բնօրինակի հետ նույնն է» մակագրությամբ:

8.1.7. Իր և Ապահովագրողի միջև ծագած տարաձայնությունների/վեճերի դեպքում դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

8.1.8. Իրականացնել Պայմաններով նախատեսված այլ գործողություններ:

8.2. Ապահովադիրը պարտավոր է՝

8.2.1. Վճարել ապահովագրավճարը Պայմանագրում նշված ժամկետներում և կարգով:

8.2.2. Պայմանագրի կնքման պահին և գործողության ընթացքում Ապահովագրողին Պայմանագրում նշված կապի միջոցներով հայտնել ապահովագրական ռիսկի գնահատման համար էական նշանակություն ունեցող և ապահովագրության օբյեկտի ռիսկայնությունը մեծացնող՝ իրեն հայտնի դարձած տեղեկատվությունը: Ապահովադիրը կրում է պատասխանատվություն Բեռի և նրա փոխադրման պայմանների մասին տրամադրված տեղեկատվության արժանահավատության և ամբողջականության համար:

8.2.3. Ապահովագրողին հայտնել Բեռը այլ պայմանագրերով ապահովագրված լինելու մասին:

8.2.4. Գլխավոր պայմանագրով ապահովագրության դեպքում Բեռի յուրաքանչյուր առաքման համար Գլխավոր պայմանագրում նախատեսված ժամկետում Ապահովագրողին հայտնել բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, իսկ եթե Պայմանագրում ժամկետը նշված չէ, ապա տեղեկությունները ստանալուց անմիջապես հետո: Ապահովադիրը չի ազատվում սույն պարտականությունից, նույնիսկ եթե ուղարկման մասին տեղեկությունները նա ստացել է Բեռն անվնաս առաքումից հետո:

8.2.5. Ապահովել Ապահովագրողի կողմից Բեռի և փոխադրամիջոցի, ինչպես նաև Բեռի պահպանման վայրերի և պահեստների զննության հնարավորություն:

8.2.6. Ապահովագրողի պահանջով օպերատիվ կերպով ներկայացնել կոնկրետ փոխադրվող բեռի՝

8.2.6.1. պատկանելությունը և արժեքը հաստատող փաստաթղթերի պատճենները,

8.2.6.2. փոխադրման փաստաթղթերի պատճենները,

8.2.6.3. վերգրությունը,

8.2.6.4. այլ անհրաժեշտ փաստաթղթեր:

8.2.7. Սեփական պատասխանատվության և իրավասության շրջանակներում կիրառել ապահովագրական ռիսկի մեծացմանը բերող հանգամանքները վերացնելուն ուղղված ողջամիտ միջոցներ:

8.2.8. Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Պայմանագրով և Պայմաններով նախատեսված կարգով և ժամկետներում պատահարի մասին տեղեկացնել Ապահովագրողին:

8.2.9. Ապահովագրողի պահանջով տրամադրել նաև այնպիսի փաստաթղթեր և տեղեկատվություն, որոնք ուղղակի կապ ունեն տեղի ունեցած պատահարի հետ կամ կարևոր են պատահարի պատճառների և/կամ վնասի չափի հիմնավորման համար:

8.2.10. Ձեռնարկել միջոցներ և կատարել անհրաժեշտ ձևակերպումներ՝ հատուցված վնասների համար պատասխանատու անձի (փոխադրող, էքսպեդիտոր, այլ երրորդ անձինք) նկատմամբ սուբրոգացիայի կարգով պահանջ ներկայացնելու իրավունքը Ապահովագրողին ապահովելու համար:

8.2.11. Ապահովագրողին տեղեկացնել երրորդ անձից (անձանցից) վնասների հատուցում ստանալու մասին:

8.2.12. Պատշաճ կերպով կատարել Պայմանագրով և Պայմաններով ստանձնած իր պարտականությունները:

8.3. Ապահովագրողն իրավունք ունի՝

8.3.1. ստուգել Ապահովադրի և/կամ Շահառուի կողմից տրամադրված տեղեկությունների և տվյալների արժանահավատությունը և ամբողջականությունը, ինչպես նաև Ապահովադրի կողմից Պայմանագրի պահանջների և պայման-

ների կատարումը իրեն հասանելի ցանկացած միջոցներով, որոնք չեն հակասում ՀՀ օրենսդրությանը:

8.3.2. ցանկացած ժամանակ կատարել Բեռի զննում, ստուգել փոխադրամիջոցի, Բեռի փաթեթավորման առկայությունը և վիճակը, Ապահովադրի (Շահառուի) կողմից Բեռի փոխադրման և միջանկյալ պահեստներում պահպանման պայմանների պատշաճ կատարումը, ինչպես նաև Ապահովադրի կողմից Բեռի և փոխադրման պայմանների մասին հայտնած տվյալների արժանահավատությունը և ամբողջականությունը: Ընդ որում, Ընկերության ներկայացուցչի կամ պատվիրակված մասնագետի/կազմակերպության կողմից կարող է կազմվել և ստորագրվել զննության ակտ, որը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

8.3.3. Ապահովադրի (Շահառուի) կողմից Պայմանների և Պայմանագրի պայմանների ոչ պատշաճ կատարման, չկատարման կամ խախտման դեպքում միակողմանի դադարեցել Պայմանագիրը՝ առնվազն երկու աշխատանքային օր առաջ այդ մասին ծանուցելով Ապահովադրին:

8.3.4. Ապահովադրի կողմից ապահովագրավճարը Պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով չվճարելու դեպքում սահմանված ժամկետին հաջորդող 5-րդ օրվանից սկսած (եթե Պայմանագրով այլ ժամկետ սահմանված չէ) միակողմանի դադարեցնել Պայմանագիրը՝ առանց Ապահովադրին նախապես ծանուցելու:

8.3.5. Պայմանագրին կից հավելվածներ/համաձայնագրեր կնքելիս, անհրաժեշտության դեպքում, Ապահովադրից պահանջել լրացուցիչ ապահովագրավճար՝ հավելվածում/համաձայնագրում հաշվարկված գումարի չափով:

8.3.6. Անհրաժեշտության դեպքում Ապահովադրից (Շահառուից) պահանջել լրացուցիչ տեղեկատվություն՝ ռիսկի աստիճանը գնահատելու համար, ինչպես նաև Ապահովագրական ռիսկի մեծացումն առաջացնող հանգամանքների մասին տեղեկանալուց հետո Ապահովադրից պահանջել վճարելու ռիսկի մեծանալուն համաչափ լրացուցիչ ապահովագրավճար: Նշված պահանջն Ապահովադրի կողմից չկատարվելու դեպքում Ապահովագրողը կիրառում է Պայմանների 6.15.2 կետով նախատեսված իրավական հետևանքը:

8.3.7. Մասնակցել Բեռի փրկման և պահպանման միջոցառումներին, ինչպես նաև տալ գրավոր ցուցումներ վնասը նվազեցնելու ուղղությամբ, որոնք պարտադիր են Ապահովադրի (Շահառուի) համար: Սակայն այդ գործողությունները չեն կարող դիտվել որպես Ապահովագրողի կողմից պատահարն ապահովագրական ճանաչելու ապացույց:

8.3.8. Ապահովագրական պատահարի հանգամանքները հետաքննելու և/կամ վճարման ենթակա ապահովագրական հատուցման չափը պարզելու համար լրացուցիչ տեղեկություններ պահանջել Ապահովադրից, Շահառուից կամ

ինքնուրույն հարցումներ կատարել համապատասխան իրավասու մարմիններին, այլ կազմակերպություններին, որոնք տիրապետում են Ապահովագրական պատահարի մասին տեղեկատվությանը, ինչպես նաև ինքնուրույն պարզել Ապահովագրական պատահարի առաջացման պատճառներն ու հանգամանքները:

8.3.9. Վերջնական որոշում կայացնելու համար հատուցման դիմում ներկայացնող անձից պահանջել անհրաժեշտ լրացուցիչ փաստաթղթեր, ինչպես նաև անձամբ կամ իր ներկայացուցչի միջոցով հետաքննել Ապահովագրական պատահարի հանգամանքները կամ ներգրավել այլ անձանց:

8.3.10. Դիմել փորձագետների՝ պատահարի պատճառները բացահայտելու կամ վնասի չափը ճշտելու համար, ինչպես նաև ապահովագրական հատուցման չափը որոշելիս հիմնվել վերջիններիս եզրակացությունների վրա:

8.3.11. Կասեցնել ապահովագրական հատուցման գործընթացը, այդ թվում՝ ապահովագրական հատուցման որոշման կայացման ժամկետները՝ նշված որոշման համար անհրաժեշտ հավելյալ տեղեկություններ ստանալու, Ապահովադրի կողմից ներկայացված փաստաթղթերի արժանահավատությունը, իսկությունը կամ վավերականությունը ստուգելու, Ապահովադրի (Շահառուի) կամ Ապահովագրողի նախաձեռնությամբ պատահարի հանգամանքները ճշտելու և/կամ առաջացած վնասի չափը որոշելու նպատակով նշանակված լրացուցիչ փորձաքննության արդյունքները ստանալու, ՀՀ օրենսդրությամբ ու Պայմաններով սահմանված դեպքերում այլ գործողություններ իրականացնելու նպատակով:

8.3.12. Ապահովադրից պահանջել տրամադրել գրավոր տեղեկություն, որն ուղղակի կամ անուղղակի կարող է որոշակի ազդեցություն ունենալ Ապահովագրողի կողմից ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականության և դրա հետևանքով հնարավոր վնասի չափի կանխորոշման վրա, ինչպես նաև այլ փաստաթղթեր և տեղեկատվություն, որոնք անհրաժեշտ են ապահովագրական ռիսկի ճշգրիտ գնահատման և Պայմանագրի կնքման համար:

8.3.13. Իրականացնել Ապահովադրի (Շահառուի) անձնական տվյալների մշակում՝ Պայմանագրի կնքման, Ապահովադրին (Շահառուին) ապահովագրական ծառայությունների մասին տեղեկատվություն տրամադրելու կամ առաջարկ ներկայացնելու, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ նպատակներով:

8.3.14. Ապահովագրական դեպքի պատճառները բացահայտելու և վնասի չափը ճշտելու համար նշանակել պատահարի պատճառի և/կամ Բեռին հասցված վնասի գնահատման փորձաքննություն և դրա հիման վրա կայացնել ապահովագրական հատուցման/մերժման որոշում:

8.3.15. Իրականացնել Պայմաններով նախատեսված այլ գործողություններ:

8.4. Ապահովագրողը պարտավոր է՝

8.4.1. Պայմանագիրը կնքելիս ապահովել Ապահովադրի կողմից Պայմաններին մատչելի եղանակով և ամբողջապես ծանոթանալու հնարավորությունը:

8.4.2. Պայմանագիրը կնքելիս Պայմանագրի և Պայմանների մեկական օրինակ տրամադրել Ապահովադրին և այդ մասին նշում կատարել Պայմանագրում:

8.4.3. Ապահովադրի (Շահառուի) կողմից տրամադրված կամ պայմանագրային հարաբերությունների ընթացքում օրենսդրությամբ չարգելված աղբյուրներից ձեռքբերված անձնական տվյալների մշակման ժամանակ ապահովել դրանց գաղտնիությունն ու անվտանգությունը՝ հաշվի առնելով ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերը:

8.4.4. Գլխավոր պայմանագրով ապահովագրության դեպքում՝ Ապահովադրի պահանջով տալ Բեռի առանձին խմբաքանակների առաքումների Պայմանագրեր:

8.4.5. Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Պայմաններով և Պայմանագրով սահմանված կարգով կատարել ապահովագրական հատուցման վճարում:

8.5. Բեռը ստանալիս Ապահովադիրը կամ իր կողմից լիազորված անձը՝ Բեռը ստացողը, հնարավոր վնասները և կորուստները բացահայտելու/բացառելու նպատակով պարտավոր է Բեռնափոխադրողի ներկայությամբ իրականացնել Բեռի արտաքին զննում, այդ թվում՝ բեռնախցիկի, կնիքների և Բեռի փաթեթավորման, և կազմել ու ստորագրել Բեռի հանձնման-ընդունման ակտ կամ Բեռի հանձնում-ընդունումը հավաստող այլ փաստաթուղթ, ինչպես նաև աննկատելի կամ ներքին կորուստներ կամ վնասներ հայտնաբերելու դեպքում դրանց վերաբերյալ Բեռը ստանալուց հետո յոթ աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել Բեռնափոխադրողին:

8.6. Եթե Բեռը ստացողը հանձնման-ընդունման ակտում կամ Բեռի հանձնում-ընդունումը հավաստող այլ փաստաթղթում չի ներկայացնում գրավոր դիտարկում Բեռի կամ դրա մի մասի նկատելի կորուստների կամ վնասների վերաբերյալ կամ Բեռը ստանալուց հետո յոթ աշխատանքային օրվա ընթացքում աննկատելի կամ ներքին կորուստների կամ վնասների ընդհանուր բնույթի վերաբերյալ, ապա համարվում է, որ Բեռը ստացողը Բեռը ստացել է ապրանքագրում և/կամ այլ ուղեկցող փաստաթղթերում նշված պատշաճ վիճակում, քանի դեռ հակառակը չի ապացուցվում Բեռը ստացողի կողմից:

8.7. Ապահովադրի պարտականությունները հավասար չափով տարածվում են նաև Շահառուի վրա: Շահառուի կողմից հատուցման դիմում ներկայացվելիս Ապահովագրողն իրավունք ունի Շահառուից պահանջել Ապահովադրի կողմից չկատարված պարտականությունների կատարում: Շահառուն կրում է նաև կատարման

ենթակա պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման ռիսկը:

8.8. Կողմերը և Շահառուն պարտավոր են չհրապարակել, չբացահայտել և/կամ երրորդ անձանց չտրամադրել իրենց հայտնի դարձած ֆինանսական և ապահովագրական գաղտնիք հանդիսացող և/կամ պարունակող ցանկացած տեսակի տեղեկություն՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի, և իրենց հայտնի դարձած տեղեկությունը չօգտագործել սեփական և/կամ երրորդ անձանց շահերին, ինչպես նաև միմյանց տնտեսական դիրքին վնաս հասցնելու համար:

9. ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

9.1. Պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը (նրա ներկայացուցիչը) և/կամ Շահառուն պարտավոր են՝

9.1.1. Պատահարի մասին անհապաղ, բայց ոչ ուշ, քան Պատահարը տեղի ունենալու պահից 48 ժամվա ընթացքում տեղեկացնել Ապահովագրողին Պայմանագրում նշված կապի միջոցներով:

9.1.2. Կախված Պատահարի բնույթից՝ անհապաղ, բայց ոչ ուշ, քան երեք ժամվա ընթացքում հայտնել համապատասխան իրավասու մարմնին (մարմիններին) (ոստիկանություն, իրավապահ մարմիններ և այլն) և նրանցից ստանալ վնասի առաջացման փաստը, պատճառները և վնասի չափը (առկայության դեպքում) հաստատող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

9.1.3. Պատահարն իրեն հայտնի դառնալուց անմիջապես հետո ձեռնարկել ողջամիտ և տվյալ հանգամանքներում մատչելի միջոցներ վնասված Բեռը փրկելու և պահպանելու, ինչպես նաև Բեռի հետագա վնասումը կանխելու և լրացուցիչ վնասների առաջացմանը նպաստող պատճառները վերացնելու համար:

9.1.4. Վնասված բեռը պահպանել անփոփոխ վիճակում և ապահովել Ապահովագրողին կամ նրա կողմից նշանակված սուրվեյերին վնասված բեռը զննելու հնարավորություն:

9.1.5. Պատշաճ հետևել և գործել Ապահովագրողի և պատահարի գծով ծառայություն մատուցող ցանկացած անձի հրահանգների/կարգադրությունների և/կամ ցուցումների համաձայն:

9.1.6. Ապահովագրական պատահարի հետ կապված գործընթացներում այլ կողմերի հետ հարաբերություններում ապահովել իր իրավունքների և շահերի պատշաճ պաշտպանությունը:

9.1.7. Հնարավորության սահմաններում իրականացնել գործողություններ՝ պատահարի մասնակից այլ կողմերի և վկաների (առկայության դեպքում) ինքնու-

թյունը (անուն, ազգանուն, հասցե, հեռախոսահամար և այլն) պարզելու նպատակով:

9.2. Վնասված բեռները փոխադրման համար նախատեսված վիճակի բերելու ոչ մի աշխատանք չպետք է սկսվի մինչև Ապահովագրողի կամ նրա կողմից նշանակված սուրվեյերի կողմից դրանց զննության ավարտը, բացառությամբ դեպքերի, երբ այդ միջոցառումները իրականացվում է Ապահովագրողի համաձայնությամբ և/կամ անվտանգության ապահովման նկատառումներով և/կամ հետագա վնասները կանխելու անհրաժեշտությամբ: Հակառակ դեպքում Ապահովագրողը պատասխանատվություն չի կրում Բեռի կրկնակի վնասման համար:

9.3. Պայմանների 9.1 կետով նախատեսված պարտականությունները չկատարվելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի չվճարելու ապահովագրական հատուցում, եթե Ապահովադիրը կամ Շահառուն չապացուցի, որ Ապահովագրողը ժամանակին իմացել է Ապահովագրական պատահարի տեղի ունենալու մասին, կամ եթե Ապահովադիրը կամ Շահառուն ապացուցում են տեղեկացնելու անհնարինությունը: Վերջին դեպքում Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է վերոնշված պարտականությունները կատարել անհնարին դարձնող հանգամանքների վերանալուց անմիջապես հետո:

10. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՅՑԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

10.1. Պատահարի տեղի ունենալու օրվանից 4 աշխատանքային օրվա ընթացքում Ապահովադիրը, Շահառուն կամ նրանց կողմից լիազորված անձը պարտավոր է ներկայացնել հայցային դիմումը՝ Պայմանագրին ու Պայմաններին համապատասխան:

10.2. Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է Ապահովագրողին գրավոր դիմում ներկայացնելու օրվանից 3 (երեք) ամսվա ընթացքում ներկայացնել ստորև նշված փաստաթղթերը՝

10.2.1. Պայմանագրի բնօրինակը (Ապահովագրողի կողմից պահանջվելու դեպքում),

10.2.2. Ապահովադրի (Շահառուի) անձը հաստատող փաստաթուղթը, սոցիալական քարտը կամ ՀԾՀ հատկացնելու մասին տեղեկանքը (առկայության դեպքում) (իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման վկայականը, ՀՎՀՀ),

Ապահովագրական պատահար տեղի ունենալու փաստը հաստատող փաստաթղթերը ջրային տրանսպորտով փոխադրման դեպքում՝

10.2.3. քաղվածք նավամատյանից,

10.2.4. նավային ակտ-վթարային հավաստագիր,

10.2.5. ընդհանուր վթարի մասին դիսպաշերի ակտը, նաև դրանց հավասարեցրած այլ պաշտոնական փաստաթղթեր՝ նշելով ապահովագրական պատահարի պատճառները:

Երկաթուղային տրանսպորտով փոխադրման դեպքում՝

10.2.6. երկաթուղու ներկայացուցչի կողմից կայարանում կազմված առևտրային ակտ՝ Բեռի վնասումների, հափշտակման, կապարակնիքի վնասման վերաբերյալ,

10.2.7. Բեռի պակասորդի մասին նշանակման կետում կազմված առևտրային ակտ՝ Բեռը ստացողի, պահպանության և երկաթուղու ներկայացուցչի ստորագրություններով,

10.2.8. Բեռը փոխադրողի կնիքով վավերացված ընդհանուր ձևի կամ դրան հավասարեցված այլ ակտ՝ վնասի գումարի նշումով,

10.2.9. վկայական՝ կազմված երկաթուղու այն բաժանմունքի ղեկավարության կողմից, որի տարածքում տեղի է ունեցել վթարը (շարժակազմի դուրս ընկնելը, կամուրջի փլուզումը և այլն), և որի արդյունքում առաջացել է Ապահովագրական պատահար,

10.2.10. երկաթուղային բեռնագիր՝ վնասի մասին գրառմամբ:

Ավտոտրանսպորտային միջոցներով փոխադրման դեպքում՝

10.2.11. Բեռի պակասորդի (ցանկացած պատճառով) մասին ակտ՝ կազմված նշանակման վայրում Բեռը ստացողի, փոխադրողի (բեռնափոխադրող ընկերության/վարորդի), պահպանության, մաքսատան ներկայացուցչի (առկայության դեպքում) կողմից,

10.2.12. ՃՈ արձանագրությունը՝ ՃՏՊ տեղի ունենալու դեպքում,

10.2.13. հետաքննության մարմնի, քննիչի կամ դատախազի կողմից քրեական գործ հարուցելու մասին որոշումը՝ Բեռի հափշտակման կամ ոչնչացման փաստերի առկայության դեպքում,

10.2.14. ճանապարհային թերթիկի պատճենը՝ Բեռը ստանալու ժամանակի և ամսաթվի և դրա որակական վիճակի, ուղարկման և կայանատեղի ժամանելու մասին նշումներով,

10.2.15. վարորդի վարորդական վկայականը,

10.2.16. վարորդի բացատրական գրությունը՝ Բեռի վնասման պատճառ հանդիսացած հանգամանքների մասին:

Օդային տրանսպորտով փոխադրման դեպքում՝

10.2.17. ավիափոխադրողի դրոշմակնիքով կամ կնիքով վավերացված առևտրային ակտ՝ վնասի գումարի մասին նշումներով,

10.2.18. Բեռի հափշտակման, վնասման փաստի մասին առևտրային ակտ՝ վնասի գումարի մասին նշումներով, վավերացրած ավիափոխադրողի և/կամ նշա-

նակման կետի օդանավակայանի ներկայացուցիչների, Բեռ ստացողի մաքսատան դրոշմակնիքով կամ կնիքով (առկայության դեպքում),

10.2.19. օդանավի աղետի մասին վկայական՝ կազմված ավիաընկերության ղեկավարության կողմից:

Տրանսպորտային ցանկացած այլ միջոցներով փոխադրման դեպքում՝

10.2.20. Ապահովադրի լիազորված ներկայացուցչի կողմից Բեռի զննման ակտերը,

10.2.21. փորձաքննության, գնահատման ակտերը և նման այլ փաստաթղթեր, որոնք կազմվել են համաձայն այն վայրի օրենքների, որտեղ հայտնաբերվել է վնասը,

10.2.22. Բեռի փրկման համար կատարված ծախսերը հավաստող փաստաթղթերը:

Բեռի նկատմամբ գույքային շահը հավաստող փաստաթղթեր՝

10.2.23. բեռնագրային փաստաթղթեր (նավաբեռնագրեր, երկաթուղային բեռնագրեր կամ փոխադրման այլ փաստաթղթեր, փաթեթավորման թերթեր, առուվաճառքի պայմանագրեր, Ապահովադրի (Շահառուի) գույքային շահը հաստատող այլ պայմանագրեր, հաշիվ-ապրանքագրեր և այլ հաշիվներ, որոնց համաձայն Ապահովադիրը (Շահառուն) պատահարը տեղի ունենալու պահի դրությամբ Բեռի նկատմամբ ունեցել է տնօրինման իրավունք):

Բեռի առաքման փաստը հավաստող փաստաթղթեր՝

10.2.24. կախված տրանսպորտային միջոցի տեսակից՝ կոնոսամենտ, ցամաքային, երկաթուղային և օդային տրանսպորտային միջոցների բեռնագրեր, ապրանքագրեր կամ այլ փաստաթղթեր՝ գործող օրենսդրությանը համապատասխան, որոնք հաստատում են Բեռի առաքումը և պարունակում են Բեռի վնասվածքի վերաբերյալ նշում:

10.2.25. տրանսպորտային, բեռնափոխադրման կամ էքսպեդիցիոն ծառայությունների պայմանագիր, փոխադրման պայմանագիր, նրանց հավասարեցրած փոխադրման այլ փաստաթղթեր, ծովային փոխադրամիջոցներով առաքվող Բեռի ապահովագրության դեպքում՝ չարտեր խմբաքանակներ և բեռնագրեր:

10.2.26. Ապահովագրողի պահանջի դեպքում՝ վնասված Բեռի լուսանկարներ,

10.2.27. Ապահովագրողի պահանջով այլ անհրաժեշտ փաստաթղթեր:

Սուբրոգացիոն իրավունքի իրացման համար անհրաժեշտ փաստաթղթեր՝

10.2.28. Մեղավոր կողմին (փոխադրողին, էքսպեդիտորին, վնասի մեջ մեղավոր այլ անձին) ուղղված պահանջ-նամակների պատճենները՝ նրանց ստացման մասին նշումով կամ նրանց ուղարկման մասին փոստային անդորրագրերի պատճեններով, մեղավոր կողմի նամակների պատասխանների պատճենները, Ապահովագրողին անցած պահանջի իրավունքի իրականացման համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր և ապացույցներ:

Փոխադրամիջոցի անհայտ կորստի դեպքում՝

10.2.29. Փոխադրամիջոցի դուրս գալու ժամկետի, ինչպես նաև Փոխադրամիջոցը նշանակման կամ Պայմանագրում նշված համապատասխան վայր չհասնելու մասին իրավասու մարմնի կողմից տրված համապատասխան ապացույց:

10.3. Փոխադրամիջոցը համարվում է անհայտ կորած, եթե այն փոխադրման ընթացքում չի հասել իր վերջնակետին, և անհայտ կորչելու սկզբից 60 օրվա ընթացքում (ռազմական գործողությունների դեպքում՝ ժամկետը կարող է երկարաձգվել մինչև վեց ամիս) այն գտնելու ջանքերը արդյունք չեն տվել, կամ որոնումը պաշտոնապես դադարեցվել է մինչ այդ ժամկետը: Անհայտ կորչելու սկզբի ամսաթիվը համարվում է փոխադրումը համակարգողի (բեռնափոխադրողի և/կամ օպերատորի և/կամ փոխադրման ամբողջական գործընթացի ցանկացած մասնակցի) հետ վերջին անգամ կապ հաստատելու ամսաթիվը և ժամը կամ այն ամսաթիվը, երբ հայտնի է եղել և գրանցվել է փոխադրամիջոցի գտնվելու վայրը:

10.4. Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է Ապահովագրողի պահանջով տրամադրել նաև այնպիսի փաստաթղթեր և տեղեկատվություն, որոնք ուղղակի կապ ունեն տեղի ունեցած պատահարի հետ կամ կարևոր են վնասի պատճառների և/կամ չափի հիմնավորման համար:

10.5. Ապահովադրի (Շահառուի) կողմից փաստաթղթերի ներկայացման խոչընդոտների կամ այլ պատճառաբանությամբ սահմանված ժամկետը երկարաձգելու մասին գրավոր միջնորդություն ներկայացվելու դեպքում Ապահովագրողը, ելնելով տվյալ գործի հանգամանքներից, կարող է Պայմանների 10.2 կետով սահմանված ժամկետը երկարաձգել:

10.6. Ապահովադրի (Շահառուի) կողմից հատուցման դիմումին կից, Պայմաններով նախատեսված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվելուց հետո 20 (քսան) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողը կայացնում է ապահովագրական հայցը բավարարելու կամ մերժելու մասին որոշում (բացառությամբ Պայմանների 10.7 կետի)՝ այդ մասին 5 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնելով/ծանուցելով Ապահովադրին և/կամ սույն կետում նշված դիմումը ներկայացրած անձին:

10.7. Քրեական վարույթ իրականացնող պետական մարմինների և պաշտոնատար անձանց, ինչպես նաև դատական և/կամ այլ իրավասու մարմիններից լրացուցիչ տեղեկություններ ու փաստաթղթեր ստանալու անհրաժեշտության դեպքում Ապահովագրական հատուցման որոշման կայացման ժամկետները կասեցվում են մինչև նշված տեղեկությունների ու փաստաթղթերի ստացումը, ինչի մասին Ապահովագրողը Պայմանագրում նշված կամ միմյանց գրավոր տրամադրված կապի միջոցներով դիմողին ուղարկում է համապատասխան ծանուցում:

10.8. Եթե պատահարի գծով հարուցվել է քաղաքացիական, վարչական կամ քրեական վարույթ կամ նույն պատահարի գծով առկա է Ֆինանսական համակարգի

հաշտարարի կողմից քննվող գործ, և ապահովագրական հատուցման վճարումը կախված է այդ գործի ելքից, ապա հատուցման որոշման կայացման և/կամ հատուցման վճարման ժամկետները կասեցվում են մինչև տվյալ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու օրը կամ մինչև Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից որոշում կայացնելու և այն կողմերի համար պարտադիր դառնալու օրը:

10.9. Ապահովագրական հայցը բավարարելու մասին որոշման կայացման դեպքում Ապահովագրողը 20 (քսան) աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է Ապահովագրական հատուցման վճարում:

10.10. Պայմաններով սահմանված ժամկետում Ապահովադրի (Շահառուի) կողմից Պայմաններով անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացվելու կամ ժամկետը երկարաձգելու մասին գրավոր որևէ միջնորդություն չներկայացվելու դեպքում՝ Ապահովագրողը, Պայմաններով սահմանված ժամկետը լրանալուց հետո, կարող է մերժել ապահովագրական հատուցման վճարումը:

10.11. Ապահովադիրը (Շահառուն) կրում է իր կողմից Ապահովագրողին ներկայացված փաստաթղթերի (ներառյալ՝ պատճենների) իսկության, հավաստիության և ոչ կեղծ լինելու բոլոր իրավական հետևանքների ռիսկերը:

11. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

11.1. Բեռի լրիվ արժեքով ապահովագրության պարագայում ամբողջական վնասի/ոչնչացման (եթե Բեռը ամբողջությամբ և անդառնալիորեն կորցրել է իր սպառողական հատկությունները և չի կարող օգտագործվել ըստ նշանակության (փաստացի կորուստ) կամ եթե վերանորոգման արժեքը գերազանցում է դրա ապահովագրական արժեքը (կոնստրուկտիվ լրիվ կորուստ)) դեպքում Ապահովագրողը հատուցման չափը որոշում է հետևյալ եղանակներից որևէ մեկով՝

11.1.1. Բեռի ամբողջ ապահովագրական գումարի չափով՝ նվազեցնելով օգտագործման համար պիտանի Բեռի մնացորդային արժեքը,

11.1.2. Բեռի ամբողջ ապահովագրական գումարի չափով, իսկ մնացորդային արժեքի նկատմամբ տնօրինման իրավունքները Ապահովադիրը փոխանցում է Ապահովագրողին՝ Բեռից հրաժարվելու մասին պայմանագրի/համաձայնագրի կամ հայտարարության համաձայն,

11.1.3. Կողմերի միջև այլ համաձայնությամբ:

11.2. Բեռի լրիվ արժեքով ապահովագրության պարագայում մասնակի վնասի դեպքում Ապահովագրողը հատուցման չափը որոշում է հետևյալ եղանակներից որևէ մեկով՝

11.2.1. Ապահովագրողի կողմից ձեռք բերված փորձագիտական եզրակացության հիման վրա կամ Կողմերի համաձայնությամբ սահմանված՝ մինչև

ապահովագրական պատահարի տեղի ունենալը Բեռի արժեքի և պատահարը տեղի ունենալուց հետո Բեռի արժեքի միջև տարբերության (կորցրած արժեքի) չափով,

11.2.2. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու հետևանքով վնասված Բեռը մինչև ապահովագրական պատահար տեղի ունենալու վիճակի բերելու (վերականգնում) համար կատարվող ծախսերի չափով: Նշված ծախսերի մեջ հաշվի են առնվում նյութերի, պահեստամասերի ձեռքբերման և տեղափոխման ծախսերը և նորոգման աշխատանքների վարձատրությունը, սակայն ոչ ավել, քան Պայմանագրի կնքման պահին Բեռի միավորի իրական արժեքն է: Ընդ որում, հաշվի են առնվում միայն այն ծախսերը, որոնք առաջացել են անմիջականորեն Ապահովագրական պատահարի հետևանքով: Նշված ծախսերից հանվում է մաքսատուրքը, եթե Ապահովագրական գումարի մեջ մաքսատուրքը ներառված չի եղել:

11.2.3. Կողմերի միջև այլ համաձայնությամբ:

11.3. Բեռի ոչ լրիվ արժեքով ապահովագրության պարագայում Ապահովագրողն իրականացնում է վնասի հատուցումն այն համամասնությամբ, որը գոյություն ունի Ապահովագրական գումարի և Ապահովագրական արժեքի միջև:

11.4. Ապահովագրական հատուցումը վճարվում է՝ հաշվի առնելով չհատուցվող գումարի չափը (առկայության դեպքում):

11.5. Պատահարի պատճառի և/կամ Բեռին հասցված վնասի գնահատման վերաբերյալ Ապահովագրողի կողմից ձեռք բերված փորձագիտական եզրակացության մասով Ապահովադրի անհամաձայնության դեպքում վերջինս իրավունք ունի փորձագիտական եզրակացության արդյունքները վիճարկել օրենսդրությամբ սահմանված կարգով:

11.6. Եթե Բեռի գծով գոյություն ունի այլ ապահովագրության պայմանագիր (բացառությամբ՝ Բեռնափոխադրողի պատասխանատվության ապահովագրության պայմանագիր), որով հատուցվում է նույն վնասը և/կամ կորուստը, ապա Ապահովագրողի ապահովագրական հատուցման չափը հաշվարկվում է Պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարի և նույն Բեռի՝ բոլոր այլ ապահովագրության պայմանագրերով նախատեսված ապահովագրական գումարների հանրագումարի հարաբերության համամասնությամբ:

11.7. Եթե Բեռի գծով գոյություն ունի նաև Բեռնափոխադրողի պատասխանատվության ապահովագրության պայմանագիր, որով հատուցվում է նույն վնասը և/կամ կորուստը, ապա Ապահովագրողն Ապահովադրին հատուցում է Պայմանագրով վճարման ենթակա գումարի և Բեռնափոխադրողի պատասխանատվության ապահովագրության պայմանագիրը կնքած ապահովագրական ընկերությունից Ապահովադրին հատուցված գումարի տարբերությունը:

11.8. Ծովային փոխադրման դեպքում Ապահովագրողը հատուցում է ընդհանուր վթարով վնասները և ծախսերը՝ «Ընդհանուր վթար» լրացուցիչ ռիսկը Պայմանագրով նախատեսված լինելու դեպքում: Ընդհանուր վթարով հատուցման ենթակա ծախսերն Ապահովագրողի կողմից հատուցվում են՝ անկախ այն բանից, որ վնասների հատուցման հետ միասին դրանք կարող են գերազանցել Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը:

11.9. Եթե Պայմանագրով հատուցվում են նաև Բեռի փոխադրման հետ կապված ծախսերը (տրանսպորտային ծախսեր, մաքսային տուրք և այլ ծախսեր), ապա Պայմանագրում սահմանված գումարի սահմաններում Ապահովագրողն Ապահովադրին (Շահառուին) հատուցում է լրացուցիչ ծախսերը՝ Բեռի ամբողջական ոչնչացման դեպքում կամ այդ ծախսերի մի մասը՝ վնասված Բեռի դեպքում՝ համաձայն Պայմանների 5.3 կետի ենթակետերի:

11.10. Ապահովագրողը հատուցում է նաև ստորև նշված ծախսերը՝ պայմանով, որ այդ ծախսերը իրականացվել են Ապահովագրողի ցուցումներով.

11.10.1. Բեռի փրկման հետ կապված, ինչպես նաև դրա հետագա վնասման կանխմանն ուղղված փաստաթղթերով հաստատված ծախսերը, նույնիսկ եթե համապատասխան միջոցներն ապարդյուն էին,

11.10.2. վնասի չափը գնահատելու համար փորձագետին վճարված ծախսերը:

11.11. Ապահովադրի կամ Ապահովագրողի (ներկայացուցչի) կողմից Բեռը փրկելու, պահպանելու կամ վերականգնելու համար ձեռնարկվող միջոցները չպետք է դիտվեն որպես պահանջ ներկայացնելու իրավունքից հրաժարում կամ Աբանդոնին համաձայնություն կամ Կողմերից որևէ մեկի իրավունքների այլ սահմանափակում:

11.12. Եթե ապահովագրական պատահար տեղի ունենալու արդյունքում չի առաջացել լրացուցիչ ծախսերի հատուցման պահանջ, ապա ընդհանուր ապահովագրական գումարի՝ լրացուցիչ ծախսերին վերաբերող ենթասահմանաչափը հաշվի չի առնվում վնասի չափը որոշելիս:

11.13. Վերափաթեթավորման ծախսերը կարող են հատուցվել Ապահովագրողի որոշմամբ, բայց ոչ ավելի, քան ապահովագրական գումարի 15 տոկոսի չափով:

11.14. Համակարգչային ծրագրեր պարունակող սարքավորումներով Բեռների (սարքավորումներ/հաստոցներ/համակարգիչներ, ծրագրային և էլեկտրոնային սխեմաներով սարքեր) վնասների հատուցումն իրականացվում է հետևյալ կերպ՝

11.14.1. Տվյալ սարքավորման ֆիզիկական վնասի և/կամ կորստի դեպքում՝ ապահովագրական գումարի սահմաններում,

11.14.2. Եթե Ապահովագրական պատահարի հետևանքով տեղի է ունեցել նաև թաքնված վնասներ, այն է՝ համակարգչային ծրագրի խափանում, ապա արտադրողի և/կամ փորձագետի կողմից փաստաթղթերով հաստատված ծրագրային ապահովման վերականգնման ծրագրի խափանման վերացման

աշխատանքների արժեքի չափով, սակայն ոչ ավել, քան կոնկրետ վնասված սարքավորման ապահովագրական գումարի 5 տոկոսը:

11.15. Եթե հավաքական բեռների անմիատար խմբաքանակի (տարբեր ֆիզիկա-քիմիական հատկություններով և ֆիզիկական վիճակներով բեռներ) փոխադրման ընթացքում ապահովագրական պատահար ճանաչված իրադարձության արդյունքում մի խմբի բեռների վնասումը հանգեցրել է այդ իրադարձություններից անմիջականորեն չվնասված մյուս խմբի բեռների վնասմանը կամ ոչնչացմանը, ապա նման վնասները ենթակա են հատուցման Ապահովագրողի կողմից:

11.16. Եթե փոխադրման արդյունքում էականորեն վնասվել (մաշվել) են Բեռի միավորի վրա փակցված պիտակները, և դա հանգեցրել է Բեռի միավորի ապրանքային տեսքի աղավաղման և Բեռի արժեքի նվազման, ապա պիտակների վնասները հատուցվում են նմանատեսակ պիտակների ձեռքբերման և նրանց փակցնելու աշխատանքների արժեքի չափով:

11.17. Եթե փոխադրման արդյունքում առանց Բեռի վնասի և/կամ կորստի վնասվել է Բեռի միավորի սպառողական փաթեթավորումը (առանց որի այդ ապրանքը չի վաճառվում և որի վրա առկա են նշաններ, գրագրություններ և այլն, որոնք վերաբերում են փաթեթավորված ապրանքին և/կամ այդ ինֆորմացիան ուղղված է սպառողին), և դա հանգեցրել է Բեռի արժեքի նվազման, ապա Բեռի սպառողական փաթեթավորման վնասը և/կամ կորուստը ենթակա է հատուցման առավելագույնը վնասված Բեռի միավորի արժեքի 1%-ի չափով: Սպառողական փաթեթավորման վնասը կհատուցվի միայն այն դեպքում, եթե փաթեթավորման արժեքի վերաբերյալ հիմնավոր փաստաթղթային ապացույցներ ներկայացվի Ապահովադրի/բեռի տիրոջ (օրինակ՝ ապրանք արտադրողի/վաճառողի) կողմից կամ եթե արժեքի վերաբերյալ տեղեկատվությունը հնարավոր է ստանալ այլ աղբյուրից:

11.18. Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, Բեռի փրկման և պահպանման, ինչպես նաև դրա հետագա վնասի կանխման բոլոր ծախսերը կատարվում են Ապահովադրի (Շահառուի) կողմից:

11.19. Եթե Ապահովադիրը (Շահառուն) ստացել է վնասների հատուցում երրորդ անձից (անձանցից), Ապահովագրողը վճարում է միայն Պայմանագրով վճարման ենթակա գումարի և երրորդ անձի (անձանց) կողմից Ապահովադրին վճարված (կամ վճարման ենթակա) գումարի տարբերության չափով:

11.20. Եթե ապահովագրական հատուցում տալուց հետո Բեռը հայտնաբերվել է, ապա Ապահովագրողը կարող է պահանջել, որ Ապահովադիրը (Շահառուն) վերադարձնի ապահովագրական հատուցման գումարը՝ պահելով Բեռը և մասհանելով Բեռի մասնակի վնասներով կամ ոչնչացումով պատճառված վնասի գումարը, եթե նման վնաս տեղի ունեցել է:

12. ԱԲԱՆԴՈՆ

12.1. Աբանդոնի դրույթը կիրառվում է միայն այն դեպքում, եթե այն նշված է Պայմանագրում:

12.2. Աբանդոնը թույլատրվում է միայն այն դեպքում, երբ ապահովագրության օբյեկտը (ներառյալ Բեռը տեղափոխող տրանսպորտային միջոցը) անհնար է լիարժեք վստահությամբ համարել կորած կամ Բեռի վնասի վերականգնման ծախսերը տնտեսապես աննպատակահարմար են:

12.3. Ապահովադիրը (Շահառուն) իր իրավունքները զիջում է Ապահովագրողին Աբանդոնի մասին դիմում ներկայացնելու միջոցով հետևյալ դեպքերում.

12.3.1. եթե Բեռը տրանսպորտային միջոցի հետ կորել է,

12.3.2. եթե Բեռը ամբողջությամբ ոչնչացվել է և պիտանի չէ հետագա օգտագործման,

12.3.3. եթե Բեռին հասցված վնասները շտկելը նպատակահարմար չէ (երբ վնասների վերականգնման ծախսերը գերազանցում են Ապահովագրական գումարի 75%-ը) կամ Բեռը նշանակման վայր հասցնելը այլևս տնտեսապես աննպատակահարմար է,

12.3.4. եթե ժողովրդական հուզումների կամ ահաբեկչական գործողությունների արդյունքում Բեռը բռնագրավվել է, այն դեպքում, երբ Բեռն ապահովագրված է նման ռիսկից, և բռնագրավումը տևում է ավելի քան 60 օր:

12.4. Աբանդոնի մասին դիմումը Ապահովագրողին կարող է տրվել 12.3.1-12.3.4 ենթակետերում նշված դեպքերի մեկնարկից հետո 6 (վեց) ամսվա ընթացքում: Աբանդոնի մասին դիմումը չի կարող հետագայում հետ կանչվել Ապահովադրի (Շահառուի) կողմից:

12.5. Աբանդոնի դեպքում Ապահովագրողն իրավունք ունի, բայց պարտավոր չէ վճարել ամբողջ Ապահովագրական գումարը:

13. ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔՆ ԱՊԱՀՈՎԱԴՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ԱՆՑՆԵԼԸ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ)

13.1. Ապահովագրական պատահար տեղի ունենալու արդյունքում Ապահովադրին պատճառված վնասից բխող Ապահովադրի (կամ Շահառուի) պահանջի իրավունքը վնասը պատճառած անձի (անձանց) (այդ թվում՝ Բեռնափոխադրողի և նրա պատասխանատվությունը ապահովագրած ապահովագրական ընկերության (ընկերությունների)) նկատմամբ անցնում է Ապահովագրողին՝ նրա կողմից հատուցված գումարի մասով:

13.2. Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է Ապահովագրողին հանձնել իր պահանջի իրավունքը հավաստող փաստաթղթերն ու այլ ապացույցներ՝ հայտնելով Ապահովագրողին պահանջի փոխանցման (սուբրոգացիայի) իրա-

վունքը կիրառելու համար բոլոր անհրաժեշտ տեղեկությունները: Եթե Ապահովադիրը (Շահառուն) խոչընդոտել է Ապահովագրողի հետադարձ պահանջի իրավունքի իրացմանը կամ գրավոր ձևով հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ պահանջի իրավունքի փոխանցման կիրառումից կամ այդ իրավունքը կիրառելն անհնարին է դարձել Ապահովադրի (Շահառուի) մեղքով, ապա Ապահովագրողն ամբողջությամբ կամ համապատասխան մասով ազատվում է Ապահովագրական հատուցում վճարելու պարտավորությունից կամ իրավունք ունի պահանջելու վերադարձնել արդեն իսկ վճարված հատուցման գումարը:

13.3. Ապահովագրողն իրեն անցած պահանջի իրավունքն իրականացնում է Ապահովադրի և վնասների համար պատասխանատու անձի (անձանց) միջև հարաբերությունները կարգավորող կանոնների պահպանմամբ:

14. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

14.1. Ապահովագրական պատահար չի համարվում և Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա չէ Բեռի վնասը, կորուստը, ոչնչացումը, որն առաջացել է՝

14.1.1. Բեռին բնորոշ և դրա բնական հատկությունների (ներառյալ ֆերմենտացում, փոշիացում, քայքայում, կոռոզիա, բնականոն և/կամ ներքին փչացում, չորացում, փտում, նեխում և այլն), ինչպես նաև նորմատիվային ստանդարտների սահմաններում քաշի կամ ծավալի բնական մաշվածության, արտահոսքի կամ կորստի պատճառով և/կամ արդյունքում:

14.1.2. Բեռի բնական և/կամ գործարանային և/կամ արտադրական թերությունների կամ հատկությունների պատճառով և/կամ արդյունքում, ինչպես նաև թերությունների, որոնք հայտնի էին Ապահովադրին (Շահառուին) մինչև Պայմանագրի կնքումը:

14.1.3. Բեռի ոչ ճիշտ, թերություններով և/կամ միջազգային ստանդարտների և նորմերի (International Maritime Organization (IMO), International Labour Organization (ILO) և United Nations Economic Commission for Europe (UNECE) միջազգային կազմակերպությունների կողմից համատեղ մշակված CTU Code (Code of Practice for Packing of Cargo Transport Unit) կանոնագիրք, ISO 21067-1:2016 ստանդարտ և/կամ բեռնափոխադրումը կարգավորող այլ միջազգային ստանդարտներ և նորմեր) խախտումով կամ տվյալ տեսակի բեռնափոխադրմանը բնորոշ վնասներին դիմակայելու ապահովագրության օբյեկտի ոչ բավարար կամ անհամապատասխան փաթեթավորման, պահպանման, տեղադրման և առաքման պատճառով և/կամ արդյունքում:

14.1.4. Բեռնափոխադրման նախատեսված ժամկետից Բեռի ուշանալու, դրա հետևանքով Բեռի գների անկման արդյունքում, եթե նույնիսկ ուշացումը տեղի է ունեցել ապահովագրված ռիսկի պատճառով (բացառությամբ

«Ընդհանուր վթար» պայմանով Բեռի փրկման կամ զոհաբերման համար իրականացված ծախսերի):

14.1.5. Փոխադրողի (տրանսպորտային միջոցի և/կամ բեռնափոխադրում իրականացնող անձի սեփականատեր, վարձակալ, օպերատոր և/կամ փոխադրման ամբողջական գործընթացի ցանկացած մասնակից) սնանկության կամ անվճարունակության պատճառով և/կամ արդյունքում այն դեպքում, երբ Բեռների բարձման ավարտի կամ պահեստավորման սկզբի ժամանակ Ապահովադիրը, Շահառուն կամ նրանց ներկայացուցիչը տեղյակ էր կամ ենթադրվում է, որ պետք է տեղյակ լիներ, որ այդ փաստը կարող է ազդել բեռնափոխադրման բարեհաջող իրականացման վրա (տվյալ փաստի վերաբերյալ տեղյակ չլինելու ապացուցման պարտավորությունը կրում է Ապահովադիրը): Սույն բացառությունը չի կիրառվում այն դեպքերում, երբ պայմանագրում նշված կողմը պարտադիր պայմանագրով բարեխղճորեն գնել է կամ համաձայնել է գնել Բեռը:

14.1.6. Միջուկային պայթյունի, ճառագայթային, ռադիոակտիվ աղտոտվածության, էլեկտրամագնիսական, քիմիական, կենսաբանական, կենսաքիմիական կամ մանրէաբանական ներգործության պատճառով և/կամ արդյունքում:

14.1.7. Գործադուլների, աշխատանքային անկարգությունների, գործատուի կողմից աշխատակիցների մուտքը աշխատավայր արգելելու, աշխատուժի բացակայության և/կամ պակասի, հարկադիր պարապուրդի ենթարկված աշխատողների և/կամ գործադուլներին մասնակցող անձանց գործողությունների պատճառով և/կամ արդյունքում:

14.1.8. Զանգվածային անկարգության, խռովության, քաղաքացիական հուզումների, հեղափոխության, ապստամբության, քաղաքացիական պատերազմի ուղղակի և անուղղակի ազդեցության պատճառով և/կամ արդյունքում:

14.1.9. Պատերազմի (անկախ նրանից, թե պատերազմ հայտարարվել է, թե ոչ), ռազմական գործողությունների, պատերազմող կողմի դեմ կամ նրա կողմից ցանկացած թշնամական գործողության, զորաշարժերի ուղղակի և անուղղակի ազդեցության պատճառով և/կամ արդյունքում:

14.1.10. Անուշադրության մատնված ականների, ականակիր նավերի, ռումբերի կամ այլ ռազմական զենքերի և/կամ նյութերի պատճառով և/կամ արդյունքում:

14.1.11. Համապատասխան պետության իրավասու մարմինների կողմից որպես ահաբեկչություն որակված իրադարձությունների, ինչպես նաև հակաահաբեկչական գործողությունների ուղղակի կամ անուղղակի ազդեցության պատճառով և/կամ արդյունքում:

14.1.12. Քաղաքական, գաղափարախոսական, կրոնական կամ անօրինական շարժառիթներով գործող ցանկացած անձի գործունեության պատճառով և/կամ արդյունքում:

14.1.13. Բեռի անբացատրելի կորստի/պակասորդի (օրինակ՝ կապարակնիքների անվնասություն, Բեռին դիպչելուն ուղղված կամ Բեռին հասցված վնասի հետքերի բացակայություն և այլ դեպքերում) հետևանքով, բացառությամբ այն դեպքերի, երբ ապացուցվում է, որ կորուստը/պակասորդը տեղի է ունեցել երրորդ անձի կողմից Պայմանագրի գործողության ընթացքում Փոխադրամիջոց անօրինական մուտք գործելու արդյունքում և/կամ Ապահովադրի (Շահառուի) և/կամ Բեռնափոխադրողի նկատմամբ բռնի և/կամ հարկադիր ուժ գործադրելու միջոցով:

14.1.14. Գրավման, առգրավման, ձերբակալման, իրավունքների սահմանափակման կամ արգելափակման կամ կալանավորման, բռնագանձման, ազգայնացման (բացառությամբ ծովահենության՝ Պայմանների 4.2.1 կետով նախատեսված «Ռիսկային խումբ Ա»-ով ապահովագրության դեպքում) և դրանց հետևանքների պատճառով:

14.1.15. Բորբոսի կամ սնկերի պատճառով և/կամ արդյունքում:

14.1.16. Որդերի, կրծողների, միջատների, թրթուրների, թռչունների և դրանց արտազատման պատճառով և/կամ արդյունքում:

14.1.17. Ցանկացած համակարգչի, համակարգչային ծրագրի, սխալ ծրագրավորման, վնասաբեր կոդի, համակարգչային վիրուսի կամ գործընթացի կամ որևէ այլ էլեկտրոնային համակարգի ուղղակիորեն կամ անուղղակիորեն օգտագործման կամ գործարկման պատճառով և/կամ արդյունքում:

14.1.18. Բեռը փոխադրող տրանսպորտային միջոցի անսարքության կամ Բեռի անվտանգ փոխադրման/պահպանման համար տրանսպորտային միջոցի, բեռնարկղի կամ պահեստասենյակի ոչ պիտանի լինելու պատճառով և/կամ արդյունքում, եթե այդ անսարքության կամ անպիտանելիության մասին տեղյակ էին Ապահովադիրը, Շահառուն կամ նրանց ներկայացուցիչը կամ պետք է տեղյակ լինեին այդ մասին Բեռների բարձման ավարտի կամ պահեստավորման սկզբի ժամանակ:

14.2. Եթե Պայմանագրով ուղղակիորեն այլ բան նախատեսված չէ, ապա Ապահովագրական պատահար չի հանդիսանում նաև Բեռների տեղափոխման ընթացքում շրջակա միջավայրին և/կամ երրորդ անձանց կյանքին, առողջությանը և գույքին պատճառված վնասը:

14.3. Ապահովագրական պատահար չի համարվում և Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա չէ Բեռի վնասը, կորուստը, ոչնչացումը, ծախսը, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված է, հետևանք է կամ բխում է վարակիչ հիվանդությունից և/կամ դրա հանդեպ վախից կամ սպառնալիքից (փաստացի կամ ենթադրյալ)՝ անկախ միաժամանակ կամ դրան հաջորդող որևէ այլ նպաստող պատճառից կամ իրադարձությունից: Պայմանների իմաստով վարակիչ հիվանդություն նշանակում է ցանկացած հիվանդություն,

որը կարող է որևէ օրգանիզմի նյութի կամ գործոնի միջոցով փոխանցվել մեկ այլ օրգանիզմ, որտեղ՝

14.3.1. նյութը կամ գործոնը ներառում է (բայց չի սահմանափակվում) որևէ վիրուս, բակտերիա, մակաբույծ կամ այլ օրգանիզմ կամ դրա որևէ տարատեսակ՝ անկախ կենդանի լինելու հանգամանքից, և

14.3.2. փոխանցման ուղղակի կամ անուղղակի եղանակը ներառում է (բայց չի սահմանափակվում) օրգանիզմների միջև օդային, մարմնական հեղուկի միջոցով, պինդ, հեղուկ կամ գազային ցանկացած մակերեսից կամ առարկայից փոխանցումը, և

14.3.3. հիվանդությունը, նյութը կամ գործոնը կարող է սպառնալիք հանդիսանալ կամ առաջացնել մարմնական վնասվածքներ, հիվանդություններ, առողջության վատթարացում և բարեկեցության կամ գույքի վնաս:

15. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

15.1. Ապահովագրողն իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցման վճարումը, եթե՝

15.1.1. Վնասը առաջացել է Շահագրգիռ անձի կողմից կատարված գործողության կամ անգործության հետևանքով, որոնց բացասական ազդեցությունը Բեռի վրա նրանց հայտնի են կամ ի պաշտոնե պետք է հայտնի լինեին:

15.1.2. Վնասը առաջացել է այն բանի հետևանքով, որ Շահագրգիռ անձը չի ձեռնարկել ողջամիտ և մատչելի միջոցներ հնարավոր վնասներից խուսափելու և/կամ դրանք նվազեցնելու համար:

15.1.3. Շահագրգիռ անձի կողմից իրականացվել են դիտավորյալ և/կամ անօրինական գործողություններ, որոնք ուղղված են եղել կամ նպաստել են Ապահովագրական պատահարի տեղի ունենալուն կամ պատճառված վնասի չափի մեծանալուն:

15.1.4. Վնասը առաջացել է Բեռը (այդ թվում՝ տարանցիկ տեղափոխվող) հանրագումարային 60 օրից ավելի պահեստներում պահելու արդյունքում, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

15.1.5. Ապահովադիրը, Շահառուն և/կամ նրանց ներկայացուցիչը պատահարի, իր նախաձեռնած գործողությունների և/կամ իր կողմից անձամբ կրած ծախսերի մասին Պայմաններով և Պայմանագրով սահմանված ժամկետներում և/կամ կարգով չի տեղեկացրել Ապահովագրողին:

15.1.6. Ապահովադրի (Շահառուի) կողմից չեն ներկայացվել կամ թերի են ներ-կայացվել հատուցում ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը:

15.1.7. Ապահովադիրը (Շահառուն) Ապահովագրողին կամ վերջինիս կողմից նշանակված փորձագետին չի ապահովել Բեռի զննություն իրականացնելու

հնարավորություն Ապահովագրողի կողմից համապատասխան պահանջ ներկայացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

15.1.8. Ապահովադիրը (Շահառուն) և/կամ նրանց ներկայացուցիչը խոչընդոտել է Ապահովագրողի կողմից պատահարի պատճառների բացահայտման և վնասի չափի ճշտման, ներառյալ՝ փորձաքննությունների և հարցումների իրականացման գործընթացին:

15.1.9. Ապահովադիրը (Շահառուն) չի պահպանել նախօրոք իր կողմից նշված փոխադրման, տեղադրման և այլ միջոցառումների իրականացման անհրաժեշտ և պատշաճ գործողությունները:

15.1.10. Պայմանագիրը կնքելիս և/կամ դրա գործողության ընթացքում Ապահովադրի (Շահառուի) կողմից Ապահովագրողին տրամադրվել են կեղծ, ապակողմնորոշիչ, իրականությանը չհամապատասխանող կամ ոչ ամբողջական տեղեկություններ և/կամ ապացույցներ Ապահովագրական պատահարի տեղի ունենալու հանգամանքների վերաբերյալ, ներկայացվել են փաստաթղթեր, որտեղ զետեղված տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը, կեղծ կամ թերի է կամ Ապահովագրողին է ներկայացվել ՀՀ օրենսդրության պահանջներին չհամապատասխանող փաստաթղթեր:

15.1.11. Ապահովագրական պատահար տեղի ունենալու պահի դրությամբ Ապահովադիրն Ապահովագրողի նկատմամբ ունի Ապահովագրավճարի գծով ժամկետանց պարտավորություններ:

15.1.12. Ապահովադիրը (Շահառուն) ներկայացրել է Ապահովագրության տարածքից դուրս տեղի ունեցած վնասի հատուցման պահանջ:

15.1.13. Ռիսկը առաջացել է Պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո:

15.1.14. Բեռնափոխադրումն իրականացվել է միջազգային ստանդարտներով սահմանված չափանիշների (ծովային փոխադրման համար՝ 01.01.2001 CL. 354 դրույթի պահանջները) խախտումով կամ այնպիսի տրանսպորտային միջոցով, որը չունի միջազգային կոնվենցիաների և/կամ բեռնափոխադրումների միջազգային անվտանգության կառավարման մարմինների կողմից վավեր վկայական (ծովային փոխադրման համար՝ ISM օրենսգրքով նախատեսված վկայական) կամ նախատեսված չէ այդպիսի Բեռ տեղափոխելու համար, կամ Բեռնափոխադրողը և/կամ օպերատորները չունեն բեռնափոխադրումների միջազգային անվտանգության կառավարման կանոնակարգերին համապատասխանող փաստաթուղթ:

15.1.15. Տեղափոխվել է փոխադրումների բնագավառը կարգավորող իրավական ակտերով, սահմանված նորմերով և պայմաններով, ինչպես նաև ներմուծող երկրի և/կամ միջանկյալ նավահանգստի կամ կետի պետության առողջապահական և/կամ սանիտարա-անասնաբուժական մարմինների կողմից արգելվող Բեռ:

15.1.16. Բեռը տեղափոխվել է փոխադրման համար արգելված այն երկրներ և/կամ երկրներից և/կամ այն երկրների տարածքով և/կամ այն չեզոք տարածքներով, որոնք գտնվում են ԵՄ-ի, ՄԹ-ի, ԱՄՆ-ի, ՄԱԿ-ի և/կամ այլ միջազգային կառույցների տնտեսական պատժամիջոցների ներքո և/կամ որոնց նկատմամբ կիրառվում է առևտրի էմբարգո:

15.1.17. Բեռը տեղափոխվել է ամրացված ինքնահոս նավի վրա կամ օվկիանոսային քարշակով:

15.1.18. Հատուկ չափսի և ծանր բեռնափոխադրումների իրականացման ընթացքում՝

15.1.18.1. փոխադրման երթուղին նախապես հաստատված չէ համապատասխան ճանապարհային ծառայությունների կամ իրավասու մարմնի կողմից,

15.1.18.2. Փոխադրամիջոցում Բեռի ամրացման, բեռնամբարձիչների միջոցով բեռնման, բեռնաթափման և բեռնափոխադրման պայմանները չեն համապատասխանում կամ բավարար չեն Բեռի բնույթի հետ,

15.1.18.3. Բեռի ամրացման համար անհրաժեշտ հատակը բացակայում է կամ այն բավարար չէ,

15.1.18.4. ենթակառուցվածքային տարրերի կարողությունները չեն համապատասխանում Բեռի չափի և քաշի հետ (ինչպես փաստաթղթերի համաձայն, այնպես փաստացի):

15.2. Պայմաններով չեն հատուցվում նաև ցանկացած կապակցված և/կամ պատճառահետևանքային վնասը և/կամ կորուստը, ներառյալ՝ պայմանագրային պարտավորությունների բոլոր տեսակի խախտումները, ներմուծման և/կամ արտահանման արգելքները, պայմանագրի անվավեր ճանաչումը և փոխարժեքների փոխանակման, շահույթի, եկամտի, հարկերի, տույժերի, տուգանքների, երաշխիքի, երաշխավորագրի, վարկային պարտավորությունների, ցանկացած այլ ֆինանսական կորուստները և/կամ վնասները, այդ թվում՝ բաց թողնված կորուստները:

15.3. Ապահովագրողն իրավունք ունի մերժել հատուցման վճարումը Պայմանագրով և Պայմաններով նախատեսված այլ դեպքերում:

15.4. Ապահովագրողը կարող է մերժել հատուցման վճարումը, եթե այն հանգեցնելու է Ապահովագրողին և/կամ համապատասխան ռիսկը վերապահովագրած վերապահովագրողին՝ ԵՄ-ի, ՄԹ-ի, ԱՄՆ-ի, ՄԱԿ-ի և/կամ այլ միջազգային կառույցների սահմանած տնտեսական պատժամիջոցները խախտելուն՝ վերջիններիս բանաձևերին, օրենքներին, կանոնակարգերին, դիրեկտիվներին և այլ նորմատիվային ակտերին համապատասխան:

15.5. Պայմանների 8.2. և 8.3 կետերով (այդ կետերի բոլոր ենթակետերով), 8.5 և 8.7 կետերով, 9-րդ, 10-րդ, 13-րդ գլուխներով և Պայմանագրով սահմանված ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԱՏԱՐՈՒՄԸ և/կամ ՉԿԱՏԱՐՈՒՄԸ կարող է հիմք հանդիսանալ ապահովագրական ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ համար:

16. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

16.1. Պայմանագրի կնքման ուժով Ապահովադիրը տալիս է իր համաձայնությունն առ այն, որ Ապահովագրողը Պայմանագրի կնքման պահից կարող է մշակել, այդ թվում՝ հավաքել կամ ամրագրել կամ մուտքագրել կամ համակարգել կամ կազմակերպել կամ պահպանել կամ օգտագործել կամ վերափոխել կամ վերականգնել կամ փոխանցել կամ ուղղել կամ ուղեփակել կամ ոչնչացնել կամ այլ գործողություններ կատարել Ապահովադրին վերաբերող և Պայմանագրի կնքման համար տրամադրված անձնական տվյալները կամ իրականացնել ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործողություններ, այդ թվում՝ անձնական տվյալների վերաբերյալ կատարել համապատասխան հարցում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ հետագայում ապահովագրության ցանկացած տեսակի գծով ծառայություններ մատուցելու նպատակով: Սույն համաձայնությունը ցանկացած ժամանակ կարող է հետ կանչվել Ապահովադրի կողմից՝ դիմումի հիման վրա, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով, որը կարող է Ապահովադրի կողմից ուղարկվել Պայմանագրում նշված էլեկտրոնային փոստի հասցեից:

16.2. Ապահովագրական հատուցումն իրականացվում է ՀՀ արժույթով, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: Ապահովագրական հատուցման գծով Ընկերությանը ներկայացված արտարժույթով ծախսերը Ապահովադրին (Շահառուին) հատուցվում են տվյալ արտարժույթին համարժեք ՀՀ դրամի սահմաններում, որը հաշվարկվում է Ապահովագրական հատուցման որոշման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքով, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

16.3. Եթե Ապահովադրի (Շահառուի) կողմից հատուցում ստանալու համար ներկայացված փաստաթղթերը օտար լեզվով են, ապա դրանց պետք է կցված լինեն որակավորված թարգմանչի կողմից կատարված թարգմանությունները, Ապահովագրողի պահանջով՝ նաև դրանց նոտարական կարգով վավերացված օրինակները:

16.4. Ապահովագրողը գրավոր ձևով Ապահովադրին և/կամ Շահառուին կարող է ազատել Պայմաններով սահմանված որոշակի փաստաթղթերի ներկայացման կամ որոշակի գործողությունների իրականացման պարտականությունից:

16.5. Պայմաններով սահմանված օրերը համարվում են օրացուցային օրեր՝ բացառությամբ, երբ Պայմանների կոնկրետ դրույթում նշված է աշխատանքային օր:

16.6. Հայաստանի Հանրապետության տարածքի հասկացությունը սահմանվում է «Պետական սահմանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

16.7. Պայմանների իմաստով Ապահովագրողի կողմից Ապահովադրին (Շահառուին) ուղարկված բոլոր ծանուցումները, որոշումները և գրությունները (այսուհետ միասին՝ Ծանուցում) համարվում են պատշաճ ծանուցված (առաքված), եթե կատարվել են հետևյալ եղանակներից որևէ մեկով.

16.7.1. Ծանուցումը ուղարկվել է փոստային առաքմամբ՝ Պայմանագրում կամ հայցային դիմումում նշված հասցեով:

16.7.2. Ծանուցումը ուղարկվել է բջջային հաղորդագրությամբ՝ Պայմանագրում կամ Ապահովադրի (նրա լիազորված անձի), Շահառուի կողմից տրամադրված այլ փաստաթղթի մեջ (հայցային դիմում, հայտարարություն և այլն) նշված հեռախոսահամարին:

16.7.3. Ծանուցումը ուղարկվել է էլեկտրոնային նամակի տեսքով՝ Պայմանագրում կամ հայցային դիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեով:

16.8. Վերոնշյալ հասցեների և/կամ Պայմանագրում նշված Կողմերի տվյալների (հասցե, հեռախոսահամար, բանկային տվյալներ և այլն) փոփոխության դեպքում Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է այդ մասին տեղեկացնել Ապահովագրողին: Եթե Ապահովագրողը չի տեղեկացվել հիշյալ փոփոխությունների մասին, ապա Ապահովադրին (Շահառուին) բոլոր Ծանուցումները ուղարկվում են նրա վերջին հայտնի հասցեով և համարվում են պատշաճ առաքված (հանձնված), իսկ Ապահովադիրը (Շահառուն)՝ պատշաճ ծանուցված, անկախ փաստացի ծանուցված լինելու հանգամանքից: Նման դեպքում Ծանուցման սկիզբ է համարվում դրա ելքի ամսաթիվը:

16.9. Պայմանագրի գործողության ընթացքում Կողմերը կարող են երկկողմանի համաձայնագիր կնքելու միջոցով փոփոխել և/կամ լրացնել Պայմանագրի դրույթները, ինչպես նաև Պայմանների որոշ դրույթներ կարող են կիրառվել մասամբ, չկիրառվել, վերաձևակերպվել կամ ավելացվել: Այդպիսի փոփոխությունները նշվում են Պայմանագրում (Գլխավոր պայմանագրում) կամ կից համաձայնագրերում կազմում են Պայմանագրի անբաժանելի մասը:

16.10. Պայմանագրից և Պայմաններից ծագող բոլոր տարաձայնությունները ենթակա են լուծման Պայմանագրում նշված և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

16.11. Պայմանագրից և Պայմաններից բխող իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

16.12. Պայմանագրի և Պայմանների միջև, Պայմանագրի և Գլխավոր պայմանագրի միջև, ինչպես նաև Պայմանագրի և Դրույթների միջև անհամապատասխանություն լինելու դեպքում գերակայությունը տրվում է Պայմանագրին: Պայմանների և Դրույթների միջև հակասության դեպքում գերակշռում են Դրույթները:

16.13. Պայմանների և նրա թարգմանությունների տարընթերցման դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն տարբերակին:

17. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

17.1. Կողմերն ազատվում են Պայմանագրով սահմանված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել, և այն անմիջականորեն հանգեցրել է պայմանագրային պարտավորությունների ամբողջությամբ կամ մասնակիորեն կատարման անհնարինությանը: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, պատերազմը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը:

17.2. Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի միակողմանի վաղաժամկետ լուծել Պայմանագիրը՝ այդ մասին մյուս Կողմին առնվազն 15 օր առաջ տեղյակ պահելով:

17.3. Պայմանագրով սահմանված պարտականությունների իրականացման վրա անհաղթահարելի ուժի ազդեցությունը պարտավոր է ապացուցել այն Կողմը, որի պարտականությունների իրականացմանը խոչնդոտում է նման ազդեցությունը:

18. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ

18.1. Պայմանագրի շրջանակներում կամ դրա կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունները սկսվելու օրվանից մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՎԵԼՎԱԾ

Լոնդոնյան Ապահովագրողների Ինստիտուտի Վերապահումների (ICC) Լրացուցիչ պայմաններ (Դրույթներ)

Հավելվածը հանրամատչելի փաստաթուղթ չէ, այն տրամադրվում է ըստ պահանջի: